

ՓԻԿՉԻ ՄԼՅԻԸ



Հեղինակ՝

ՍԱՐԻԱ ԳՐԱՅԻԱ ՍԱՌԱ

Թարգմանեց՝

ՍԱՇՏՈՅ ՎԱՀԷ ԴԱԶԱՐԵԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Սիրելի Ընթերցող,

օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպատակները մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:

Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.

gradaran@mashtoz.org

Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաղորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւնների հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:

Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

Մաշտոց Վահէ Ղազարեան

ՓԻԿՉԻ ՄԼՅԻԼ

ԱՍՏՈՒԱԾԱՇՇՆՉՈՒՄ

Ամենասրբուհի Կոյս Մարիամի մասին շատ վսեմ բաներ է ասում Աստուածաշունչը Հին ու Նոր Կտակարանների գրքերում, որոնք յստակ կերպով ցոյց են տալիս Փրկչի Մօր դերը փրկութեան տնտեսութիւնում: Արդ տեսնենք՝ թէ որոնք են աստուածաշնչեան այն հատուածները, որ վերաբերում են Աստուածամօրը:

Հին Կտակարանում

Հին Կտակարանի գրքերը նկարագրում են փրկութեան պատմութիւնը, որի ընթացքում կամաց կամաց նախապատրաստուում է Քրիստոսի գալուստը աշխարհ: Հին Կտակարանի գրութիւնները, ինչպէս որ ընթերցւում են Եկեղեցում եւ հասկացւում են Նոր Ուխտի վերջնական ու լիակատար Յայտնութեան լոյսի ներքոյ, քայլ առ քայլ աւելի յստակօրէն են դուրս ցայտեցնում մի կնոջ կերպարը. Փրկչի Մայրը: Հին Կտակարանի մարեմական հատուածները հիմնականում հինգն են, որոնց համառօտ քննարկումը կը թոյլատրի մեզ որոշ յստակութեամբ տեսնել Աստուածամօր եզակի կերպարը Հին Կտակարանում:

ա) **Փրկչի Մայրը** (Ծնդ. 3, 15): Աստուածային պատուիրանի հանրայայտ խախտումից յետոյ Աստծոյ կողմից մեր նախածնողներին տրուած խոստումը կոչուել է (1638 թուականին, բողոքական Ռէթրուսի կողմից) «Նախաաւետարան», այսինքն՝ առաջին Աւետարան (բարի լուր): Աստուած ասում է օձին. «Թշնամութիւն եմ հաստատելու քո եւ կնոջ միջեւ, քո սերունդի եւ նրա սերունդի միջեւ. նա կոխելու է գլուխդ, մինչ դու փորձելու ես խայթել նրա կրունկը»: Այս առաջին մարգարէութեամբ, որը կարող ենք անուանել Թագուհին բոլոր մարգարէութիւնների, Մարիամի կերպարը արդէն գծագրւում է օձի հանդէպ յաղթանակի վերաբերեալ մեր անկեալ նախածնողներին տրուած խոստման մէջ:

Հին ու նոր մեկնաբանողներ իրենց առաջ հարց են դրել. ո՞վ է այդ կինը, որի մասին խօսուում է մարգարէական խոստման մէջ: Եւա՞ն է, թէ՞ Մարիամը: Թէ՞ Եւան ու Մարիամը միասին: Զանազան եւ երբեմն միմեանց հակառակ են եղել պատասխանները: Գաղտնիքի բացման ու այս դժուար հարցի լուծման բանալին գտնուում է կնոջ «սերունդին» վերաբերող խօսքերում, սերունդ՝ որ յաղթելու էր սատանայական օձին (յաղթանակը այլաբանօրէն պատկերւում է գլուխը ոտնակոխ անելով): Եթէ սատանային յաղթող «սերունդը», ինչպէս վկայում է քրիստոնէական ամբողջ աւանդութիւնը, Քրիստոս Փրկիչն է, սրանից անհրաժեշտօրէն հետեւում է՝ որ մարգարէութեան մէջ յիշատակուող «կինը» Փրկչի Մայրն է, Ամենասրբուհի Կոյս Մարիամը: Նա մասնակցում է իր Որդու պայքարին («Թշնամութիւն») եւ յաղթանակին («գլուխը կոխել»), այսինքն՝ մարդկութեան փրկութեան գործին:

բ) **Էմանուէլի Կոյս**–Մայրը (Ես 7, 14-16): Մարիամն է այն Կոյսը, որ յղանալու եւ ծնելու էր մի որդի, որի անունը լինելու էր Էմմանուէլ, այսինքն՝ Աստուած մեր հետ է (հմմտ. Ես 7, 14; Միք 5, 2-3; Մտթ 1, 22-23):

Երկու թագաւորներ (Դամասկոսի եւ Սամարիայի) ներխուժում են Յուդայի թագաւորութեան սահմաններից ներս եւ սպառնում են բնաջնջել Դաւթի

Թագաւորական սերունդը: Աքազ Թագաւորը սարսափի մէջ է, բայց Աստուծոյ հանդէպ վստահութիւն ունենալու փոխարէն՝ յոյսը դնում է մարդկային օգնութեան վրայ: Յայնժամ Տէրը նրա մօտ է ուղարկում Եսայի մարգարէին, որպէսզի Թագաւորին վստահեցնի՝ թէ երկու վերոյիշեալ Թագաւորների ծրագրերը չեն իրականանալու: Եսային նոյնիսկ հրաւիրում է նշան խնդրելու, փաստելու համար այն՝ ինչ ասում է յանուն Աստուծոյ: Բայց Աքազը կեղծաւորութեամբ մերժում է նշան խնդրել, ասելով՝ թէ չի կամենում փորձել Տիրոջը: Յայնժամ Եսային իր կողմից հռչակում է հանդիսաւոր մարգարէութիւնը. «Էլ լաւ, ուրեմն Տէրն ինքը կը տայ քեզ նշան: Ահա Կոյսը կը յղանայ ու կը ծնի որդի, որին կը կոչեն Էմմանուէլ: Իւղ ու մեղր կ'ուտի, մինչեւ որ կը մերժի չարը ու կ'ընտրի բարին, որովհետեւ մանուկը չարը մերժելու եւ բարին ընտրելու հասակին տակաւին չհասած՝ խեղճութեան կը մատնուեն քեզ այդքան նեղող երկու Թագաւորների երկրները»:

Հետեւաբար, հակառակ Աքազ Թագաւորի մերժումին, Աստուած պահպանելու է Դաւթի Թագաւորական սերունդը եւ ազատելու է այն վտանգից, որ ծանրանում է նրա վրայ: Այս բանի նշանն ու գրաւականն է լինելու Մեսիայի կուսական յղացումը եւ կուսական ծնունդը Դաւթի Թագաւորական սերունդից: Էմմանուէլ (Աստուած մեր հետ է) անունը ակնարկում է Մեսիայի աստուածութեանը եւ Մեսիայի կոյս Մօր աստուածային մայրութեանը: Եսայի մարգարէն Աքազ Թագաւորին վստահեցնում է՝ թէ շուտով թշնամի Թագաւորների երկրները ասպատակութեան են ենթարկուելու ասորեստանցիների կողմից, ինչը որ տեղի ունեցաւ Ք.ա. 732 թուականին:

Մատթէոսն իր Աւետարանում արձանագրում է այս մարգարէութեան իրականացումը հետեւեալ խօսքերով. «Արդ այս ամէնը կատարուեց՝ որպէսզի իրականանար Տիրոջ կողմից մարգարէի միջոցով ասուածը. "Ահա Կոյսը կը յղանայ ու կը ծնի որդի, որին կը կոչեն Էմմանուէլ, որ նշանակում է. Աստուած մեր հետ է"» (Մտթ 1, 22-23):

դ) Նա՛ որ Ձնէլո՛ւ է Մեսիային Բեթղեհէմում (Միք 5, 2-3): Եսայիի մարգարէութեանը Միքէան, նրա ժամանակակիցը, աւելացնում է մի կարեւոր մանրամասնութիւն. Մեսիայի ծննդեան վայրը, որ է Եփրատի Բեթղեհէմը Յուդայի Թագաւորութիւնում (որը հարկաւոր է զանազանել Գալիլիայի Բեթղեհէմից. Յս 19, 15):

Ասում է Միքէան. «Եւ դու, Բեթղեհէմ, Եփրատի սակաւամարդ տուն, կը լինես Յուդայի երկրի հազարաւորների մէջ. Իսրայէլի մի իշխան է ելնելու քեզնից իմ համար, եւ նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է: Մինչ այդ թողնելու է նրանց մինչեւ ծննդկանի ծնելու ժամանակը. նա կը ծնի, եւ նրա մնացած եղբայրները կը վերադառնան իսրայէլացիների մօտ: Նա (= ծնուած Փրկիչը) այնտեղ կը լինի ու կը Թագաւորի Տիրոջ զօրութեամբ եւ իր Տէր Աստուծոյ անուան փառքով: Խաղաղութիւն կը լինի նրանով, որովհետեւ մեծ կը լինի մինչեւ երկրի ծայրերը»:

«Մինչեւ ծննդկանի ծնելու ժամանակը» ասելով՝ Միքէա մարգարէն անկասկած ակնարկում է Եսայիի մարգարէութեանը, որ վերաբերում էր յղացող եւ ծնող Կոյսին, որի որդին անուանուելու էր Էմմանուէլ: «Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է» ասելով, եբրայեցիներէն արտայայտութեան համաձայն՝ կարող ենք հասկանալ ծնունդի աստուածային ծագումը (համտ. Ես 9, 5), որ ժամանակներից առաջ է, այսինքն՝ յաւիտենական:

Այս մարգարէութեան իրականացումը նոյնպէս Մատթէոսը արձանագրել է իր Աւետարանում. «Եւ հարցրին (Մոգերը). "Ո՞ր է հրեաների նորածին Թագաւորը, որովհետեւ նրա աստղը տեսանք Արեւելքում ու եկանք երկրպագելու նրան": Սա լսելով, Հերովդէս արքան եւ իր հետ ամբողջ Երուսաղէմը խռովուեց, եւ հաւաքելով բոլոր քահանայապետներին ու ժողովրդի դպիրներին, հարցնում էր նրանց՝ թէ ո՞ր

է ծնուելու Մեսիան: Պատասխանեցին նրան. ”Յուդայի Բեթղեհէմում, որովհետեւ այսպէս է գրուած Մարգարէի միջոցով. եւ դու, Բեթղեհէմ, Յուդայի երկիր, Յուդայի կարեւոր քաղաքների մէջ ամենափոքրը չես այլեւս. քեզնից մի Իշխան է ելնելու ինձ համար, որ հովուելու է Իսրայէլի իմ ժողովուրդը”» (Մտթ 2, 2-6):

դ) **Նա՛ որ առաջինն է Տիրոջ խոնարհների ու աշխարհների մէջ:** Ամենասրբուհի Կոյս Մարիամը առաջինն է Տիրոջ խոնարհների ու աղքատների մէջ, որոնք Նրանից վստահութեամբ սպասում եւ ընդունում են փրկութիւնը:

Իր ամբողջ տարողութեամբ հասկանալու համար այս հաստատումը, հարկաւոր է ի նկատի ունենալ, որ փրկութեան պատմութեան ընթացքում (չին Կտակարանի սուրբ գրքերում գծագրուած) կամաց կամաց զանազանում է այսպէս կոչուած «Տիրոջ աղքատներ» խումբը (եբր. *anawim*): Տիրոջ այս աղքատներն ա՛յլ բան չէին, եթէ ոչ՝ Իսրայէլն ըստ հոգու (ի տարբերութիւն ըստ մարմնի Իսրայէլի), այսինքն նրանք՝ ովքեր սպասում էին Մեսիա-Փրկչի գալուստը խոնարհութեան ու աղքատութեան մէջ, անջատուած այն ամէնից՝ որ Աստուած չէ: Այդպիսիք էին, պարզապէս մի քանի անուն տալու համար, Յովսէփը, Զաքարիան, Եղիսաբէթը, Միմոն ծերունին, Աննան եւ այլոք: Տիրոջ աղքատների այս հոսանքը, որ սնունդ էր առնում մարգարէների յորդորներով, գնալով աւելի ու աւելի էր հաստատուում շնորհիւ խմբային ու անձնական փորձութիւնների, աքսորում եւ յետաքսորային շրջանում: Այսպիսով, օրինակի համար, Սոփոնիան, իր համազգայիններին ուղղուելով ասում էր. «Քեզնում թողնելու եմ աղքատ ու նուաստ ժողովուրդ» (Սոփ 3, 12): Խոնարհեցման մէջ մարգարէները մատնանշում էին փառաւորման ճանապարհը, աղքատութեան մէջ բացայայտում էին հարստութեան գաղտնիքը, մարդկային ու ժամանակաւոր ամէն ինչից անջատման մէջ ցոյց էին տալիս աստուածայինն ու յաւիտենականը ունենալու միջոցը: Այսպիսիների վրայ է, – բացատրում էին մարգարէները, – հանգչում Տիրոջ հայեացքը, որովհետեւ իր համար առարկայ են ե՛լ սիրոյ ե՛լ բերկրանքի: «Երգեցէք Տիրոջը, – բացականչում է Սաղմոսերգուն, – երգ նոր ... որովհետեւ Տէրը նպաստում է իր ժողովուրդին եւ խոնարհներին (*anawim*) պսակում է յաղթանակով» (Սղմ 149, 1-4):

Տիրոջ ճիշտ այս աղքատների մէջ է եզակի պայծառութեամբ փայլում Ամենասրբուհի Կոյս Մարիամը: Նա, իր Քրիստոս Որդու հետ, որը հռչակել էր՝ թէ իր առաքելութիւնը կայանում էր «աղքատներին բարի լուրը քարոզելու» մէջ (Ղկս 4, 18) եւ յայտարարում էր. «Երանի՛ աղքատներին, որովհետեւ նրանցն է Աստուծոյ արքայութիւնը» (Ղկս 6, 20), գլուխն է Տիրոջ այս աղքատների: Նա է այն լուսեղէն կէտը, որի մէջ իր լիակատար արտայայտութիւնն է գտնում ըստ հոգու Իսրայէլի ամբողջ խորհրդագրութիւնը (միստիկան), նա՛ որ արժանի եղաւ յղանալու եւ ծնելու Մեսիա-Փրկչին: Յիրաւի, հրեշտակապետի աւետմանն ի լուր, նա իրեն վերագրեց միայն մէկ տիտղոս. «Տիրոջ աղախինը»:

Չին Կտակարանում նոյնպէս, Իսրայէլի ժողովուրդը յաճախ է անուանւում «Տիրոջ ծառայ»: Աստուածամայրը, Տիրոջ աղախինը, անձնաւորումն է Իսրայէլի՝ Տիրոջ ծառայի: Մարիամը վկայում է, որ Տէրը տեսել է «Իր աղախնի խոնարհութիւնը (*anawa*)» (Ղկս 1, 48): Այս իսկ պատճառով, «Տիրոջ աղքատների» մէջ ամենաաղքատը դարձել է ամենահարուստը, դարձել է Տիրոջ Մայրը, դարձել է Թագուհին երկնքի ու երկրի, եւ խոնարհութեան անդունդներից բարձրացուել է մինչեւ փառքի գագաթնակէտը. «խոնարհ եւ բարձր»: Տէրը «գահազրկեց իշխաններին, բարձրացրեց խոնարհներին. բարիքներով լիացրեց քաղցածներին, իսկ հարուստներին ետ ուղարկեց դատարկ ձեռքերով» (Ղկս 1, 52-53): «Տիրոջ աղքատները» դարձել են «Տիրոջ հարուստները», եւ այս նորայայտ հարուստների գլուխն է Մարիամը, ճիշտ որովհետեւ գլուխն էր աղքատների:

ե) «Սիօնի Գո֊֊արը»։ Մարիամով, որ անուանուում է Սիոնի Դուստր, խոստման ժամանակաշրջանի երկարատեւ սպասումից յետոյ՝ ժամանակները հասնում են իրենց լրումին եւ հաստատուում է մի նոր Տնտեսութիւն, երբ Աստծոյ Որդին նրանից վերցնում է մարդկային բնութիւնը, իր Մարմնի խորհուրդներով ազատելու համար մարդուն մեղքից։

Սիոնի այս Դուստրը, որի մասին առաջին անգամ լինելով խօսում է Միքէա մարգարէն (4, 8-10), իսկ նրանից յետոյ՝ Երեմիա մարգարէն (31, 22-23) եւ ամբողջովին իւրայատուկ կերպով՝ Սոփոնիա մարգարէն (3, 14-18), ժամանակի ընթացքում առաւել լայն ընդունելութիւն գտած մի մեկնաբանութեան համաձայն՝ ընտրեալ ժողովուրդի դուստրերից մէկը չէ պարզապէս, այլ ներկայացուցիչը, անձնաւորումն է այդ ժողովուրդի, յատկապէս որպէս վայրը Աստծոյ ներկայութեան, որպէս նա՝ որ ապրում, տառապում եւ գործում է Մեսիային ծնելու կենդանի սպասմամբ, Մեսիան՝ այն գլուխը, որի խորհրդաւոր (միստիկ) մարմինն է Եկեղեցին։ Այսպիսով, օրինակի համար, Սոփոնիան ասում է՝ դիմելով Սիոնի Դստերը. «Յնծա՛, ո՛վ Դուստր Սիոնի, Իսրայէլի Արքան, Տէրը, քեզնում է (beqirbech = որովայնիդ ներսում)։ Մի՛ երկնչիր, Սիոն, քո Տէր Աստուածը գրկումդ է (beqirbech), Փրկիչը (ioshia), որ քուն չի մտնում»։ Հին Կտակարանի «Սիոնի Դուստրը» յանձինս Մարիամի դադարում է լինել խորհրդանշանը մի բարոյական անձի (Իսրայէլի ժողովուրդը) եւ դառնում է մի Ֆիզիքական անձ, նա՝ որ իսկապէս իր որովայնում կրեց Իսրայէլի Արքային, Տիրոջը, Փրկչին, Յիսուսին, ինչպէս որ երեւում է նաեւ Ղուկասի կողմից իր Աւետարանում գործածուած խօսքերից, որոնք արձագանքում են Սոփոնիայի մարգարէութիւնը Սիոնի Դստեր վերաբերեալ. «Յնծա՛, շնորհներով լի, Տէրը քեզ հետ է ... : Մի՛ երկնչիր, Մարիամ ... : Ահա որովայնումդ կը յղանաս ու կը ծնես մի որդի, որին կ'անուանես Յիսուս (Ieshua = Տէրը փրկում է)»։ Ամենասրբուհի Կոյս Մարիամը, հետեւաբար, ճշմարիտ «Սիոնի Դուստրն» է, անձնաւորումը կատարեալ Իսրայէլի, որի մէջ՝ փրկող Տիրոջ ներկայութիւնը հասնում է իր նշանակութեան լիութեանը։

Այսպիսով, Աստուածաշնչում Մարիամի ներկայութիւնը մեր առջեւ յայտնուում է մի նոր լոյսի ներքոյ։ Նա, Նոր Կտակարանում, ամենակատարեալ իրականացումն է Հին Կտակարանի «Սիոնի Դստեր»։ Նա Իսրայէլի, այսինքն՝ լինի Հին թէ՛ Նոր Կտակարանների Եկեղեցու ամենամաքուր, ամենասուրբ մասն է։ Նա իրենում է կենտրոնացնում Հին Կտակարանի բոլոր սպասումներն ու նախապատրաստութիւնները՝ ընդունելու համար փրկիչ Մեսիային, եւ Նրա հետ՝ Նոր Կտակարանի ամբողջ աստուածային պայծառութիւնը։ Նա միմեանց կապող օղակն է՝ Հին Կտակարանի Եկեղեցու եւ Նոր Կտակարանի Եկեղեցու միջեւ։ Յիրաւի, պատկանում է Հին Կտակարանի Եկեղեցուն, որպէս վերջինիս ամենագեղեցիկ ու ամենավճիտ արտայայտութիւնը, եւ միաժամանակ՝ իր ամբողջ էութեամբ ուղղուած է դէպի Նոր Կտակարանի Եկեղեցին, որի կատարեալ բնօրինակն է։

Նոր Կտակարանում

Մարիամի կերպարը, գծագրուած՝ Հին Կտակարանում, կենդանանում է նոր գոյներով եւ պատկերւում է իր կերպարի բոլոր մանրամասնութիւններով Նոր Կտակարանում։ Նորկտակարանեան մարեմական զանազան հատուածները ներկայացնում են Ամենասրբուհի Կոյս Աստուածամօրը սերտօրէն միացած իր Որդուն, Քրիստոս Փրկչին, վերջինիս կեանքի երեք հանգրուաններից իւրաքանչիւրում. ծածուկ կեանքի տարիներին, բացայայտ քարոզչութեան ընթացքում եւ փառաւորումից յետոյ։

ա) «Մարիամ» անուն նշանակութիւնը: Առաջին կինը, որ կրել է այս անունը, թուում է՝ թէ Մովսէսի քոյրն է (եբր. *Miriàm*): Յիսուսի ժամանակներում, այս անունը հրեայ կանանց ամենասովորական անուններից մէկն էր, ինչպէս տեսնում ենք Նոր Կտակարանում եւ Յովսէփ Փլաւիոսի գրութիւններում: Աստուածամայրը, հետեւաբար, կրում էր մի անուն՝ որն իրեն ոչնչով չէր զանազանում միւս կանանցից: Ինչ վերաբերում է այս անուան նշանակութեանը, մինչեւ օրս կատարուել են բացատրութեան մօտ վաթսուն առաջարկներ, որոնցից ամենահաւանականը սա է. Մարիամ անունը առաջացել է եգիպտական *mry* արմատից, որ նշանակում է սիրուած, եւ եբրայեցերէն *iam* հապաւումից, որի ամբողջական ձեւը Աստծոյ անունն է (*mry + iam = Miriàm*): Հետեւաբար՝ նշանակում է Աստծուց սիրուած, ուստի հիանալի կերպով վայելում է Աստուածամօրը:

բ) Մարիամը Գալիլայո՛ւմ. Աւետարանը Նազարէթո՛ւմ: Աստծոյ կողմից Ամենաարբուհի Կոյս Մարիամի մօտ առաքուած Գաբրիէլ հրեշտակապետը ողջունում է նրան եւ աւետում է Յիսուսի յղացումն ու ծնունդը, ինչպէս նաեւ Նրա աստուածային մեծութիւնն ու յաւիտենական թագաւորութիւնը: Պատասխանելով Կոյսի հարցումներին, հրեշտակապետը բացատրում է՝ որ յղացումը լինելու է կուսական, այսինքն՝ կատարուելու է Սուրբ Հոգու հրաշագործ գորութեամբ եւ աստուածային ամենակարողութեամբ: Որպէս աստուածային ամենակարողութեան նշան, հրեշտակապետը յայտնում է՝ թէ Եղիսաբէթը, Մարիամի զարմուհին, նա նոյնպէս յղի է, թէեւ ծերութեան տարիներն է արդէն ապրում եւ ամբողջ կեանքում եղել է ամուլ: Աստծոյ ամենակարողութեան լոյսով պարզաբանուած պատասխանները ստանալով, Մարիամը յայտնում է իր համաձայնութիւնը. «Ահա Տիրոջ աղախինն եմ, թող խօսքիդ համաձայն լինի ինձ»: Հրեշտակը հեռանում է նրանից (Ղկս 1, 26-38) եւ այդ նոյն վայրկեանին «Խօսքը մարմնանում է» (Յովհ 1, 14) Մարիամի արգանդում:

գ) Մարիամը Յոգայի երկրո՛ւմ. այցելութիւնը Եղիսաբէթին: Աւետումից եւ Խօսքի մարդեղութիւնից անմիջապէս յետոյ, Մարիամն իսկոյն ճանապարհ է ընկնում դէպի Յուդայի լեռները, դէպի Աին Քարիմ (Երուսաղէմից մօտ 7 կմ հեռու), այցելելու Եղիսաբէթին, Զաքարիայի կնոջը, շնորհաւորելու համար նրա մայրութիւնը եւ տրամադրելու համար նրան իր ծառայութիւնները: Իր Մօր անձի միջոցով, մարմնացած Խօսքը կամենում էր սրբագործել իր կարապետին, այսինքն՝ իր առջեւից եկողին, որն ողջունում է իր Փրկչին՝ ցնծութեամբ խայտալով իր մօր որովայնում: Եղիսաբէթը, Սուրբ Հոգու կողմից լուսաւորուած, ճանաչում է Աստծոյ կողմից Մարիամի անձում կատարուած վսեմ հրաշագործութիւնները, եւ ողջունում է նրան՝ անուանելով «Տիրամայր»: Եղիսաբէթի ողջոյնի այս խօսքերին Մարիամը պատասխանում է օրհներգով («Մեծացուցէ»ն), որը լի է զեղուն սիրով ու երախտագիտութեամբ՝ իր փոքրկուտեան հանդէպ Աստծոյ անսահման բարութեան համար: Ապա իր հայեացքը մինչեւ ապագայ դարերն ուղղելով, մարգարէանում է՝ որ բոլոր ազգերի կողմից կոչուելու է «երանելի»: Եղիսաբէթի հետ մնում է մօտ երեք ամիս (Թերեւս մինչեւ Յովհաննէս Մկրտչի ծնունդը) եւ ապա վերադառնում է Նազարէթ, իր տունը (Ղկս 1, 39-56):

դ) Մարիամը Բեթղէմէ՛ւմ. Յիսուսի Քնուիցը: Մարիամը, Յովսէփի հետ (որը հրեշտակի միջոցով երազում տեղեկացել էր Փրկչի կուսական յղացմանը. Մտթ 1, 18-25), Օգոստոս Կեսար կայսեր կողմից հրամայուած մարդահամարի պատճառով

թողնում է Նազարէթը եւ մեկնում է Յովղայի երկիրը, Բեթղեհէմ, կրելով երեք-չորս օրուայ մի ճամփորդութիւն: Հիւրանոցում տեղ չգտնելով, պատսպարուում են մի քարայրում, ուր Մարիամը ծնում է Յիսուսին եւ դնում մսուրի մէջ: Ծնունդից քիչ անց, Յիսուս ընդունում է հովիւների այցելութիւնը, որոնք Փրկչի ծնունդի մասին տեղեկացել էին մի հրեշտակից, որը բարի լուրը տալուց յետոյ, հրեշտակային մի վիթխարի խումբի հետ, սկսել էր երգել ու ասել. «Փառք Աստծուն երկնային բարձունքներում, իսկ երկրի վրայ խաղաղութիւն բարի կամքի տէր մարդկանց»: Ծնունդից ութ օր յետոյ, օրէնքի համաձայն՝ մանուկը թլփատուում է եւ ստանում Յիսուս անունը (Ղկս 2, 1-20): Բեթղեհէմում, մի տան մէջ, Յիսուս Մանուկը ընդունում է մոզերի այցելութիւնը, որոնք աստղի կողմից առաջնորդուած՝ եկել էին Արեւելքից եւ իրենց հետ որպէս ընծայ բերել էին ոսկի, խոլենկ եւ գմուռս (Մտթ 2, 1-2):

ե) **Մարիամը Գաճարում:** Մաքրամաքուր կոյս-մայր լինելով հանդերձ, ենթարկուելով մոզսական օրէնքին, Յիսուսի ծնունդից քառասուն օր յետոյ Մարիամը ներկայանում է Տաճար, որպէսզի օրէնքի համաձայն մաքրուի եւ (երկու տատրակներով կամ երկու աղանիներով) փրկագնի իր առաջնեկին, որը օրէնքի համաձայն պատկանում էր Տիրոջը եւ ոչ թէ ծնողներին: Արարողութիւնից յետոյ տեղի է ունենում հանդիպումը Սիմէոն ծերունու հետ, որը Կոյսի համար մարգարէանում է՝ թէ նրա Որդին ոմանց համար լինելու է անզսպելի սիրոյ, իսկ ոմանց համար՝ կատաղի ատելութեան առարկայ, եւ որ վշտի երկսայրի մի սուր է անցնելու Մարիամի սրտի միջով (Ղկս 2, 22-33):

զ) **Մարիամը Եգիպտոսում:** Հերովդէս արքան, մոզերից լսելով՝ թէ ծնուել էր Հրեաների նոր արքան, եւ քահանաներից ու դպիրներից տեղեկանալով՝ որ մարգարէութիւնը որպէս Մեսիայի ծննդեան վայր մատնանշում էր Բեթղեհէմը, չկարողանալով գտնել Նրան, հրամայում է սպանել Բեթղեհէմի ու մօտակայքի երկու տարեկան եւ նուազ բոլոր մանուկներին: Հրեշտակը երազում յայտնում է Յովսէփին Հերովդէսի չարագործ հրամանը եւ պատուիրում է փախչել ու ապաստանել Եգիպտոսում (ուր հրեաները վաղուց հիմնել էին ծաղկուն մի համայնք):

Սուրբ Ընտանիքը մեկնում է գիշերը եւ բազում օրերի ճանապարհորդութիւնից ու գանազան դժուարութիւններ ու տառապանքներ կրելուց յետոյ հասնում է աքսորի երկիրը: Հերովդէսի մահից յետոյ, հրեշտակի նոր հրահանգը ստանալով, Սուրբ Ընտանիքը կրկին վերադառնում է Նազարէթ (Մտթ 2, 13-23):

է) **Մարիամը Երուսաղէմում. Գասներկո՛ւսմեայ Յիսուսին կորցնելը:** Ամէն տարի, Մարիամն ու Յովսէփը, ինչպէս իւրաքանչիւր բարեպաշտ իսրայէլացի, սովոր էին քարաւաններով ճամփորդել դէպի Երուսաղէմ, Զատիկի տօնին մասնակցելու համար, որը տեւում էր եօթ օր: Երբ Յիսուս արդէն տասներկու տարեկան է, տանում են Նրան իրենց հետ: Վերադարձին, սակայն (միշտ քարաւանով), «Յիսուս մնաց Երուսաղէմում եւ ծնողները չանդրադարձան: Կարծելով՝ թէ ազգականների մօտ է, քայլեցին մէկ օրուայ ճանապարհ, ապա սկսեցին փնտռել Նրան ազգականների ու ծանօթների մօտ: Չգտնելով, վերադարձան Երուսաղէմ, որպէսզի այնտեղ փնտռէին Նրան»: «Երեք օր անց, գտան Նրան տաճարում, օրէնքի ուսուցիչների միջեւ նստած. ունկնդրում էր նրանց եւ հարցեր էր տալիս»: Մարիամը յայտնում է իր ու Յովսէփի մտահոգութիւնը եւ հարցնում է՝ թէ ինչո՞ւ այդպէս վարուեց իրենց հետ: Յիսուս պատասխանում է. «Ինչո՞ւ էիք ինձ փնտռում: Չգիտէ՞ք, որ Հօրս տանն եմ պարտաւոր լինել»: Բայց նրանք, եզրափակում է Աւետարանը, ամբողջովին չհասկացան Յիսուսի պատասխանը:

Միասին վերադարձան Նազարէթ, ուր Յիսուս ապրում էր նրանց ենթակայ (Ղկս 2, 41-52):

Բացայայտ քարոզչութեան ընթացքում

ա) **Սկզբում. Մարիամը Կանայի Հարսանիչում:** Մարիամի միջամտութեամբ (միջնորդութեամբ կամ բարեխօսութեամբ) Յիսուս ընտիր գինիի է վերածում կոժժերի մէջ լցուած ջուրը: Սա լինում է Յիսուսի կողմից կատարուած հրաշքների երկար շարանի մէջ առաջինը, որով «բացայայտեց իր փառքը» եւ «Իր աշակերտները հաւատացին իրեն» (Յվհ 2, 1-11):

բ) **Յիսուսի բացայայտ կեանքի ընթացիւմ:** Յովհաննէս Աւետարանիչը տեղեկացնում է՝ թէ Կանայի հրաշքից յետոյ Յիսուս «իջաւ Կափառնաում մօր, գարմիկների ու աշակերտների հետ միասին, բայց այնտեղ մնացին միայն մի քանի օր» (Յվհ 2, 12): Համաբարբառ երեք Աւետարանները պատմում են, որ մի օր, մինչ Յիսուս ուսուցանում էր ամբոխի մէջ կանգնած, ինչ որ մէկը մօտենում է նրան եւ տեղեկացնում՝ թէ «Իր մայրն ու գարմիկները, դրսում կանգնած, կամենում էին տեսնել իրեն»: Բայց Յիսուս, ուղղուելով դէպի այդ մարդը, պատասխանում է. «Ո՞վ է իմ մայրը եւ ովքե՞ր են իմ եղբայրները», ապա ձեռքերը դէպի իր աշակերտները պարզելով՝ յայտարարում է. «Ահա՛ իմ մայրն ու իմ եղբայրները, որովհետեւ ով կատարում է կամքն իմ Հօր, որ երկնքում է, նա՛ է իմ եղբայրը, քոյրը եւ մայրը» (Մտթ 12, 46-49; Մրկ 3, 31-35; Ղկս 8, 19-21): Այս պատասխանով, Յիսուս չի մերժում իր Մօրը, չի իջեցնում նրան փառքի գահից, այլ մեզ տալիս է այդ փառքի գահին հաւասարուելու յոյսը, որ եթէ կատարենք երկնային Հօր կամքը՝ կը բարձրացնի մեզ մինչեւ իր մաքրամաքուր Մօր գերկը:

Ուրիշ երկու անգամ եւս Աստուածամայրը պատահաբար յիշատակում է Աւետարաններում, Քրիստոսի բացայայտ կեանքի ու քարոզչութեան ընթացքում: Մարկոսի Աւետարանում. «Սա (Յիսուս) հիւսնը չէ՞, Մարիամի որդին» (Մրկ 6, 3): Եւ Ղուկասի Աւետարանում, ուր պատմում է՝ թէ մինչ Յիսուս ուսուցանում էր, մի անանուն կին, ի տես Յիսուսի իմաստութեան, ամբոխի միջից բացականչում է ու ասում. «Երանի՛ր այն արգանդին, որ կրեց քեզ եւ այն կրծքերին, որ ծծեցիր»: Բայց Յիսուս պատասխանում է. «Առաւել եւս երանի նրանց՝ ովքեր լսում են Աստուծոյ խօսքը եւ պահում են այն» (Ղկս 11, 27-28): Այդ «առաւել եւս»ը չի մերժում մարմնական ազգակցութեան արժէքը, այլ պարզապէս դուրս է ցայտեցնում հոգեւոր ազգակցութեան կապի գերազանցութիւնը: Ինչպէս իրաւացիօրէն նկատել է տալիս ժամանակակից մեկնիչներից մէկը (Մալդոնադոյ), եթէ որեւէ մէկը «երանի՛ նրան՝ ով արծաթ ունի» բացականչողին պատասխանի «առաւել՛ եւս երանի՛ նրան՝ ով ոսկի ունի», սրանով չի արժէքազրկի արծաթը, այլ պարզապէս կը հաստատի, որ ոսկին աւելի թանկարժէք է՝ քան արծաթը:

գ) **Բացայայտ կեանքի աւարտին. Մարիամը Գողգոթայի վրայ:** Յովհաննէս Աւետարանիչը Մարիամին ներկայացնում է Յիսուսի խաչի ստորոտին: Եւ աւելացնում է, որ Յիսուս ասում է իր Մօրը. «Կին, ահա՛ քո որդին»: Ապա ասում է աշակերտին. «Ահա՛ քո Մայրը»: Այս խօսքերով, Յիսուս մեզ բոլորիս, այսինքն՝ Եկեղեցին, որը տուեալ պահին խորհրդանշուած է Յովհաննէս Առաքեալի անձում, յանձնում ու վստահում է իր Մօրը, նրա մայրական սիրոյն, պաշտպանութեանն ու Աստուծոյ առջեւ բարեխօսութեանը: Դիմում է իր Մօրը՝ անուանելով նրան «Կին», որպէս նոր Եւայ, որովհետեւ «կին» երբայեցերէն նշանակում է «կեանք ունեցողների մայր»: Ամենասրբուհի Կոյս Աստուածածին Մարիամը, այսպիսով, Մայրն է բոլոր նրանց՝ ովքեր գործադրում են երկնաւոր Հօր կամքը, այսինքն՝ իրենց հոգիներում սնուցում են աստուածային յաւիտենական այն կեանքը, որն

այստեղ երկրի վրայ արդէն բերում է սիրոյ, գթութեան ու խաղաղութեան առատ պտուղներ եւ իր լիակատար փառքին է հասնելու Քրիստոսի երկրորդ գալստեանը, Արքայութեան մշտնջենաւոր հայրենիքում:

Փառաւորումից յետոյ

ա) **Մարիամը զինուորեալ Եկեղեցո՞ւմ:** Գործք Առաքելոց գիրքը մեզ տեղեկացնում է, որ Քրիստոսի Համբարձումից յետոյ, առաջին հաւատացեալները, Վերնատանը հաւաքուած, ուր Յիսուս կատարել էր Վերջին Ընթրիքը, «բոլորը յարատեւում էին, համերաշխ՝ աղօթքի մէջ, կանանց, Մարիամի՝ Յիսուսի Մօր եւ Յիսուսի եղբայրների հետ» (Գրծ 1, 14): Մարիամն այսպիսով գործադրում էր «Եկեղեցու Մօր» իր բարձր պաշտօնը, շարունակելով Քրիստոսի խորհրդաւոր Մարմինն շռայլել այն բոլոր հոգատարութիւնները, որ ընծայում էր Քրիստոսի իրական Մարմինն, սպասման մէջ՝ մասնակցելու Նրա փառաւորմանը, ինչպէս մասնակցել էր Նրա խոնարհութեանը:

բ) **Մարիամը յաղթական Եկեղեցո՞ւմ:** «Երկնքում մի գմայլելի նշան յայտնուեց. մի Կին, արեւը պատմուճանի նման հագած, լուսինը ոտքերի ներքոյ, իսկ գլխի շուրջբոլորն ունէր տասներկու աստղերից բաղկացած մի պսակ» (Յյտ 12, 1): «Կինը», որի մասին խօսում է Աստուածաշնչի վերջին գիրքը, այն նոյնն է՝ որի մասին խօսում է Աստուածաշնչի առաջին գիրքը (Ծնդ 3, 15). Մարիամը: Երկու գուգահեռ պատմութիւններ են, որովհետեւ նոյնն են դերակատարները. կինը, կնոջ Որդին, սատանան: Գեղեցիկ տողեր ունի ժամանակակից մեկնիչներից մէկը (Ա. Ռոմէոյ). «Մի կին բարձրանում է դէպի երկնային բարձրութիւնները, արեւը հագած, լուսինը ոտքերի տակ առած, համաստեղութիւններով շրջապատուած: Փրկչի Մայրն է: Փառաւոր Կինը նա՛ է, որ բարձրանում է դէպի աստուածային գահը, եւ որ փրկչական իր տառապազին մայրութեամբ ստացել է յաւիտենականութիւնը: Այն Կինն է, որ դրուել է տիեզերքի գագաթին ու կենտրոնում, որպէս ամբողջութիւնն այն լոյսերի՝ որոնք լուսաւորում են մարդկութիւնը ... »:

Յայտնութեան գրքի 12րդ գլխի այս տողերում կարող ենք տեսնել նաեւ ո՛չ միայն Մարիամի կերպարը, այլ նաեւ նրա Վերափոխումը երկինք, որպէս Մայր եւ Թագուհի տիեզերքի:

ՊԱՐԱԿԱՆՈՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ

«Պարականոն» (ἀποκριθός) եզրը Քրիստոնէութեան մէջ ստացել է իւրայատուկ իմաստ. մատնանշում է այն գրքերը, որոնք ըստ տիտղոսի, ըստ քննարկուած նիւթի եւ ըստ հեղինակի դիտաւորութեան (հեղինակը, աւելին, թաքնուած է Առաքեալներից մէկի անուան ետեւում) յաւակնում էին հաւասարուել Աստուածաշնչի ներշնչուած գրքերին, մինչ Եկեղեցին մերժել է նրանց աստուածային ծագումը:

Մարեմական պարականոն գրքերը (ինչպէս նաեւ Յիսուսին վերաբերողները) բոլորն էլ քրիստոնէական ծագում ունեն եւ շարադրուել են Ք.յ. 2-7րդ դարերում: Սրանց շարադրման նպատակն էր կենսագրական այն սակաւաթիւ տեղեկութիւնների լրացումը, որոնք աւանդել են մեզ կանոնական գրքերը (Աւետարանները, Նամակները, Յայտնութիւնը) Մարիամի կարեւորագոյն կերպարի մասին, եւ յատկապէս այն՝ ինչ վերաբերում էր Աստուածամօր կեանքի առաջին շրջանին (Աւետումից առաջ) եւ վերջին տարիներին (Հոգեգալուստից յետոյ):

Մարեմական գլխաւոր պարականոնները հետեւեալներն են. Յակոբոսի Նախաաւետարանը, Փրկչի Աւետարանը ըստ կեղծ-Մատթէոսի, այսինքն՝ Ամենասրբուհի Մարիամի Ծննդեան եւ Փրկչի մանկութեան գիրքը, Մարիամի Ծննդեան Աւետարանը, մանկութեան արաբական Աւետարանը, փայտագործ Յովսէփի պատմութիւնը, Ամենասրբուհի Կոյս Աստուածամօր Վերափոխման Գիրքը:

ա) **Յակոբոսի Նախաաւետարանը:** Պարականոն գրքերի մէջ ամենահինն է, ամենահանրայայտը, ամենատարածուածը, ամենաազդեցիկն ու ամենակարեւորը, որ շարադրուել է մօտաւորապէս 2րդ դարի կէսին, հաւանաբար Եգիպտոսում, յոյն լեզուի մի քրիստոնեայի կողմից:

Անկեղծ բարեպաշտութիւն բուրոյ լեզուով, պատմում է Մարիամի կեանքի առաջին տարիները (որոնց մասին ամբողջովին լռում են կանոնական Աւետարանները), այն պահից՝ որում հրեշտակը նրա ծնունդը աւետում է նրա ամուլ ծնողներին (որոնք առաջին անգամ լինելով անուանուում են Յովակիմ եւ Աննա), մինչեւ այն օրը՝ որում թողնում է Տաճարը (ուր առանձնացել էր երեք տարեկան հասակում), կրօնական հեղինակութիւնների կողմից վստահուելով Յովսէփի պաշտպանութեանը: Պատմութիւնը վերջանում է Զաքարիայի՝ Յովհաննէս Մկրտչի հօր ողբերգական վախճանով, որին սպանում են Հերովդէսի հրամանով: Այս ամէնը պատմում է քսանչորս գլուխներում:

Յակոբոսի Նախաաւետարանը ծնունդ է տուել ծիսական զանազան տօների. Մարիամի յղութիւնը, ծնունդը, ընծայումը Տաճարին, ինչպէս նաեւ ծիսական յիշատակումը Յովակիմի եւ Աննայի: Քրիստոնէական լինի արեւելեան՝ թէ արեւմտեան գեղարուեստը վերարտադրել է այս հռչակաւոր պարականոնի մէջ պատմուած դէպքերն ու տեսարանները:

Յակոբոսի Նախաաւետարանը լայն տարածում է ունեցել Արեւելքում, անկասկած՝ այն հեղինակաւոր անուան պատճառով՝ որի պաշտպանութեան ներքոյ ազատօրէն շրջագայում էր (Յակոբոս Կրտսերը): Իրօք, շատ շուտով թարգմանուում է ասորերէնի, ղպտերէնի, հայերէնի, վրացերէնի, արաբերէնի ու եթովպերէնի: Արեւմուտքում, մինչդեռ, լատիներէնի է թարգմանուել եւ հրատարակուել միայն 1552 թուականին Ֆրանսայում. մինչեւ այս թարգմանութիւնը, Յակոբոսի Նախաաւետարանի բովանդակութեանը Արեւմուտքը ծանօթ էր նրա երկու խմբագրումների միջոցով. կեղծ-Մատթէոսի Աւետարանը եւ Մարիամի Ծննդեան Աւետարանը:

բ) **Կեղծ-Մատթէոսի Աւետարանը, այսինքն՝ Ամենասրբուհի Մարիամի Ծննդեան եւ Փրկչի Մանկութեան Գիրքը:** Յակոբոսի Նախաաւետարանի ամենանշանաւոր խմբագրումն է: Զեռագրերը, սակայն, Մատթէոսից բացի, գրութիւնը վերագրում են ոմանք Յակոբոսին, ոմանք Յովհաննէսին, ոմանք էլ՝ Ոնէգրիմոսին: Նախաբանում (որն ինքն իր մասին վկայում է՝ թէ գրուել է «երանաշնորհ քահանայ Հերոնիմոսի» կողմից), այս պարականոնը ներկայանում է որպէս առաքելական գրութիւններից մէկի լատիներէն թարգմանութիւնը, որ իբր թէ կատարուել է Սբ. Հերոնիմոսի կողմից, հերետիկոսութիւններով լի որոշ «պարականոն գրքերի» դէմ ճշմարտութիւնը պաշտպանելու նպատակով: Իրականում, շարադրուել է 5րդ կամ 6րդ դարում եւ շրջագայութեան է դրուել Սբ. Հերոնիմոսի հեղինակաւոր անուան պաշտպանութեան ներքոյ: Քառասուներկու գլուխներում, պատմում է Մարիամի կեանքի առաջին շրջանը: Առաջին մասում (1-24 գլուխներ), օգտագործում է Յակոբոսի Նախաաւետարանը եւ պատմում է քիչ թէ շատ նոյն դէպքերը, երբեմն որոշ յատկումներ մտցնելով: Երկրորդ մասում (25-42 գլուխներ), պատմում է յօրինուած հրաշքներ եւ դրանք վերագրում է Յիսուս Մանկանը, յաճախ ընկնելով այն պարականոններին յատուկ ցնորաբանութիւնների մէջ, որոնք խստիւ դատապարտում են իրական Սբ. Հերոնիմոսի կողմից:

գ) **Մարիամի Զննդեան Ա-եղբայրանը**: Այս պարականոն գրուծիւնը նոյնպէս շրջագայել է Սբ. Հերոնիմոսի անուան ներքոյ: Նախորդ երկու պարականոններին չի աւելացնում յիշարժան ոչինչ: Սահմանափակում է, գովասանքի արժանի խելացիութեամբ ու խոհեմութեամբ, պարզապէս մերժելով այն ամէնը՝ որ նրանցում կայ չափազանցուած ու երեւակայական, անհաւանական եւ ուղղակի անհամ: Այս ձեւով կատարուած խմբագրումից ծնւում է որոշ չափով ուղղափառ մի գրքոյկ, որ հաշւում է տասը գլուխ եւ զուրկ չէ հետաքրքրութիւնից: Այս պարականոնի հեղինակի համաձայն, Մարիամը ծնւում է Նազարէթում, եւ ոչ թէ Բեթղեհէմում, թէեւ ընդունում է ընտանիքի մայրական կողմի բեթղեհէմեան ծագումը:

դ) **Մանկութեան արաբական Ա-եղբայրանը**: Կոչւում է այսպէս՝ որովհետեւ երկար ժամանակ ճանաչուել է միմիայն արաբական մի ձեռագրի միջոցով: Շարագրուել է մօտաւորապէս 6րդ դարում: Յիսուսհինգ գլուխներում, խմբագիրը հաւաքել է այն բոլոր առասպելական ականդութիւնները, որոնք իր ժամանակ պատմւում էին Փրկչի մանկութեան տարիների մասին: Պատմում է, օգտուելով Յակոբոսի Նախաւետարանից, Յիսուսի ծնունդը եւ հասնում է մինչեւ փախուստը Եգիպտոս (1-9 գլուխներ): Ապա հետեւում է (եւ սա է նորութիւնը) պատմութիւնների մի շարք, որ վերաբերում է Սուրբ Ընտանիքի կողմից Եգիպտոսում անցկացուած տարիներին եւ Նազարէթ վերադարձին, բազմաթիւ սքանչելագործ դէպքերի նկարագրումներով (10-35 գլուխներ): Վերջին գլուխներում (36-55), պատմում են մի շարք տարօրինակ հրաշքներ, որոնք իբր թէ կատարել է Յիսուս Մանուկը հինգից տասներկու տարեկան հասակում: Ամենասրբուհի Կոյս Մարիամը ներկայանում է որպէս միջնորդ եւ բարեխօս՝ Աստուածային Մանկան կողմից պարգեւուած այս շնորհների համար:

ե) **Փայրագործ Յովսէփի պարմութեանը**: Իր Առաքեալների հետ Յիսուսի խօսակցութեան ձեւով, այս պարականոնը պատմում է Սբ. Յովսէփի կեանքն ու մահը: Բնագիրը (որի ձեռագրերն ունենք ղպտերէն եւ արաբերէն լեզուներով) թւում է՝ թէ շարագրուել է Եգիպտոսում, 4րդ դարի վերջին կամ 5րդի սկզբնաւորութեանը: Յովսէփը մահանում է առընթեր ունենալով Մարիամին, եւ մինչ Միքայէլ եւ Գաբրիէլ հրեշտակապետները նրա հոգին առաջնորդում են երկինք, յայտարարում է՝ թէ մարմինը անապական է մնալու մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը:

զ) **Ամենարքունի Կոյս Աստուածամօր Վերափոխման Գիրքը**: 3րդ դարում, ոմն Լէոնչոս գնոստիկ հերետիկոսի անունով, սկսում է տարածուել պարականոն մի գիրք՝ «Սրբուհի Մարիամի Վերափոխումը» տիտղոսով, մի գիրք՝ որն իրենում պարունակած ուսմունքային սխալների պատճառով՝ ուղղափառ քրիստոնէութեան ներկայացուցիչների կողմից որակաւորուեց որպէս «անընդունելի»:

4րդ դարում, Սարգիի եպիսկոպոս կեղծ-Մելիթոնը, որն ուղղափառ հեղինակ է, սրբագրեց եւ խմբագրեց Լէոնչոսի հերետիկոսական գրուծիւնը. այսպիսով ի յայտ եկաւ Սարգիի եպիսկոպոս կեղծ-Մելիթոնի «Մարիամի Վերափոխումը» գիրքը, որի տասնութ կարճ գլուխներում պատմւում է Մարիամի մահուան ու յարուցման մասին, որը տեղի է ունեցել յուղարկաւորումից ու թաղումից անմիջապէս յետոյ: Այս գիրքը մինչեւ մեր օրերը հասել է զանազան ձեռագրերով. ասորերէն, յունարէն, արաբերէն, լատիներէն եւ այլն, ոմանք աւելի՝ ոմանք նուազ ընդարձակ ծաւալով:

ՀԱՅՐԱԽՕՍԱԿԱՆ ԱԻՄՆԳՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Ով ուշադիր եւ բարեպաշտ հայեացքով քննում է Աստուածամօր վերաբերեալ հայրախօսական աւանդութիւնը, չի կարող տպաւորութիւնը չունենալ՝ թէ զբօսնում է մի բուրումնաւէտ պարտէզի մէջ, որ լի է վառվռուն ամենազանազան գոյներով աչք շոյող ծաղիկներով: Այս աւանդութիւնը ընդգրկում է քրիստոնէական թուարկութեան առաջին ութ դարերը, բացառութեամբ առաջին դարի՝ որի յատկանիշն են առաքելական ներշնչուած գրքերը, որոնց արդէն անդրադարձանք:

ա) **2րդ դար**: Մարեմական գրութիւնները, որ հասել են մեզ այս դարից, բաւականին հազուադէպ են եւ աւելի սահմանափակում են կրկնելով այն՝ ինչ արդէն ասուած է Աւետարանիչների կողմից. Ամենասրբուհի Կոյսը Քրիստոսի Մայրն է, որ Նրան յղացել է առանց իր կուսութիւնը կորցնելու, այսինքն՝ առանց տղամարդու միջամտութեան, այլ՝ Սուրբ Հոգու աստուածային զօրութեամբ: Յատուկ ուշադրութեան են արժանի մարեմական մտածումները՝ արտայայտուած Սբ. Իգնատիոս Անտիոքացու կողմից (+ 107-110, որ յայտնի է նաեւ Սբ. Իգնատիոս Աստուածագգեաց Հայրապետ անունով) իր Նամակներում: Սբ. Իգնատիոսի համաձայն, ինչպէս նաեւ ըստ նամակների հասցէատէրերի, Մարիամը մի յայտնի անձ էր, մեծարանքի արժանի. Դաւթի սերունդին պատկանող մի կոյս էր, որ լուութեան մէջ իրականացած աստուածային մի հրաշքի զօրութեամբ՝ դարձել է Աստուծոյ Մայրը. Մարիամն է Աստուծոյ կողմից կանխաւ աւետուած Կինը (Կոյս եւ Մայր), որովհետեւ աստուածային յաւիտենական ծրագրերի համաձայն՝ Աստուած Մարիամին նոյնպէս մասնակից դարձրեց իր գործերին, վերադարձնելու համար մարդուն այն՝ ինչ նրանից խլել էր սատանան:

Եւա-Մարիամ գուգահեռութեան ակնյայտ շեշտումը, որն Ամենասուրբ Կոյսին մտցնում է փրկութեան պատմութիւնից ներս (որի առաջին ակնարկները գտնում ենք Ղուկասի եւ Յովհաննէսի Աւետարաններում), յստակ կերպով արտայայտում է 2րդ դարի վերջում, Սբ. Յուստինոսի կողմից (մարտիրոսացած մօտաւորապէս 165 թուականին) իր յայտնի «Երկխօսութիւն Թրիփոն հրեայի հետ» գրութեան մէջ (100, 4-6), եւ դե՛ռ աւելի՝ Սբ. Երանոս Լիոնցու կողմից (մահացած մօտաւորապէս 202 թուականին). «Հետագայում ... , - գրում է Սբ. Երանոսը, - գտնուում է Մարիամը, հնազանդ կոյսը ... : Եւան, տակաւին կոյս, անհնազանդ գտնուեց (Աստուծոյ նկատմամբ) եւ ինքն իր ու ամբողջ մարդկութեան համար դարձաւ մահուան պատճառ: Մարիամը, հնազանդ կոյսը, ինքն իր ու ամբողջ մարդկութեան համար դարձաւ փրկութեան պատճառ: Մարիամից դէպի Եւան նոյն շրջանն է: Քանի որ կապը արձակելու ուրիշ եղանակ չկայ՝ եթէ ոչ միայն կապերի հակառակ ուղղութեամբ ընթացքը ... Եւայի անհնազանդութիւնը արձակուեց Մարիամի հնազանդութեամբ. այն՝ ինչը որ կոյս Եւան կապել էր անհաւատութեամբ, արձակուեց Մարիամի հաւատքի միջոցով» (Ընդդէմ հերետիկոսութիւնների, Գ 22): Յանձինս Սբ. Երանոսի, Եւա-Մարիամ հիմնական գուգահեռութիւնը հասնում է իր լիակատար եւ ամենայաջող սահմանմանը: Բացի սա, այս գուգահեռութիւնից նաեւ անկախ, Սբ. Երանոսը բաւական յստակ կերպով հաստատում է, որ Մարիամը վերածնել է մարդկութիւնը աստուածային շնորհի գերբնական կեանքին. « ... Նա՛ մաքուրը, մաքրապէս, բացելով Աստուծոյ կողմից մաքրագործուած մաքուր գիրկը՝ մարդկանց վերածնում է Աստուծոյ համար ... » (նոյն, Դ 33): Այո՛, յանձինս Քրիստոսի, որ ծնւում է Մարիամից, ամբողջ մարդկութիւնն է՝ որ վերածնւում է կեանքի համար: Այն համերաշխութեան հետեւանքում, որ գոյութիւն ունի Յիսուս Քրիստոսի եւ մարդկանցից իւրաքանչիւրի միջեւ, Յիսուս Քրիստոսի յղացումն ու ծնունդը արդէն նրանց

վերածնունդն է, եւ հետեւաբար՝ Յիսուս Քրիստոսին ծնող Մայրը կարող է կոչուել Մայրը՝ որ ծնում է մարդկանց: Նոր Ադամի Մայրը դառնալ յանձն առնելով՝ Մայրը դէպի կեանք վերածնեց նրանց՝ ովքեր վերածնունդ են Յիսուսի հետ եւ Յիսուսի միջոցով:

Սբ. Երանոսն, ապա, յստակ կերպով հաստատում է Մարիամի կուսուլթիւնը Յիսուսի ծնունդից առաջ, ծնունդի ընթացքում եւ, անուղղակի ակնարկելով, նաեւ ծնունդից յետոյ: Սբ. Երանոսն իրաւացիօրէն է կոչուել «մարեմական առաջին աստուածաբանը»:

Նոյն դարաշրջանում, յիշարժան է նաեւ Կղեմէս Աղեքսանդրացին (մօտ 150-215), որը Մարիամի աստուածային մայրութեան մասին խօսելուց բացի՝ հաստատում է նաեւ նրա կուսուլթիւնը, ո՛չ միայն Յիսուսի ծնունդից առաջ, այլ նաեւ ծնունդից յետոյ. այս հաստատումը կատարելուց յետոյ Կղեմէս Աղեքսանդրացին աւելացնում է՝ թէ սա հաւատքն է «շատերի»: Առաջին անգամ լինելով, մեկնելով Յայտնութեան գրքի 12րդ գլխի պարունակութիւնից, Մարիամի կերպարի յատկութիւնները գործածելով՝ գծագրում է Եկեղեցու դէմքը, միեւնոյն կերպարանքի մէջ խառնելով երկու Կոյսերն ու երկու Մայրերը. Մարիամն ու Եկեղեցին:

բ) **Յրգ Գարուն**: Որոգինէսը ամենայն հաւանականութեամբ (ոչ լիակատար վստահութեամբ) այն աստուածաբանն է, որն առաջին անգամ լինելով գործածել է «Theotòkos», Աստուածածին եզրը, արտայայտելու համար Մարիամի աստուածային մայրութիւնը: Պատմագիր Սոկրատը պատմում է, որ աղեքսանդրացի հռչակաւոր աստուածաբանը, Պօղոս Առաքեալի Հռոմէացիներին ուղղուած Նամակի իր Մեկնութիւններում, գործածել էր Theotòkos եզրը եւ բաւական երկար յօդուած էր գրել վերջինիս վերաբերեալ: Բայց, ցաւոք սրտի, Որոգինէսի Մեկնութիւնների յունարէն բնագիրը կորել է եւ մեզ հասել է միայն լատիներէն թարգմանութիւնը, որ կատարել է Ռուֆինոս Աքուիլէյացին. այս թարգմանութիւնում, սակայն, Սոկրատի խօսքերը փաստող ոչինչ չկայ: Բայց քանի որ բոլոր բանասէրները քաջ գիտեն, որ Ռուֆինոսը սովորաբար «ազատօրէն» էր թարգմանում Որոգինէսի գործերը, յարմարեցնելով դրանք իր լատին ընթերցողներին, երբեմն կրճատելով՝ երբեմն աւելացնելով, այժմ բոլորի կողմից Որոգինէսին է ընծայուում Theotòkos եզրի ստեղծման եւ գործածման պատիւը:

Որոգինէսը, Յիսուսի ծնունդից առաջ Մարիամի կուսուլթիւնը հաստատելուց յետոյ՝ դաւանում է նաեւ Մարիամի կատարեալ կուսուլթիւնը նաեւ Յիսուսի ծնունդից յետոյ եւ յառաջ է բերում գաղափարը՝ որ Մարիամը գլուխն ու օրինակն է կանացի վանականութեան (կուսակրօնութեան), ինչպէս որ Յիսուս օրինակն է տղամարդկանց: Նոյնպէս առաջին անգամ լինելով, Սիմէոն ծերունու կողմից Մարիամին կանխասացուած «վշտի սուրը» մեկնաբանում է որպէս սուրը կասկածների, որոնց տառապանքին ենթարկուեց Մարիամը Քրիստոսի չարչարանքների պահին: Հետագայում, բազում սուրբ Հայրապետներ որդեգրեցին այս մեկնաբանութիւնը (օր.՝ Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Յովհան Ոսկեբերան, եւ այլոք):

Սբ. Իպպոլիտոս Հռոմէացին նոյնպէս, Սբ. Երանոսի աշակերտը, որոշ բանասէրների համաձայն, իր Յակոբի Օրհնութիւնները գրութեան յունարէն բնագրում պէտք է որ գործածած լինի դասական Theotòkos եզրը. «Յովսէփը, Մարիամի նշանածը, դառնում է Աստուածածնի վկան»: Նոյն եզրը պէտք է որ գործածած լինի նաեւ իր Երգ Երգոցի Մեկնութեան մէջ: Բայց բանասէրների մեծամասնութիւնը, հիմնուելով Սբ. Իպպոլիտոս Հռոմէացու Յակոբի Օրհնութիւնները գրութեան հայերէն հնագոյն թարգմանութեան վրայ (քանի որ հայերէն թարգմանութիւնները միշտ աչքի են ընկնում բնագրի հանդէպ իրենց հաւատարմութեամբ), հաստատում են՝ թէ խօսքը վերաբերուում է բնագրի մի աղաւաղման եւ օտար ձեռքի կողմից մտցուած մի յաւելման:

Սբ. Իպպոլիտոս Հռոմէացին, մինչդեռ, հեղինակն է մի ա՛յլ հռչակաւոր արտայայտութեան. «Բերոնիմոսի դէմ» իր աշխատութիւնում, Մարիամին կոչում է «Ամենասրբուհի միշտ Կոյս Մարիամ», իսկ Սաղմոսների Մեկնութիւնում աւելացնում է՝ թէ «Տէրը կառուցուել է անփուտ փայտերով, այսինքն՝ Մարիամից եւ Սուրբ Հոգուց»։ Հետեւաբար, լինի Քրիստոս (Տապանը), թէ Մարիամը (փայտը՝ որով շինուեց Տապանը), զերծ էին մեղքի ապականութիւնից։

Տերտուղիանոսը (մօտ 160-222) վեհութեամբ է ներկայացնում Մարիամի կուսական յղութեան եւ աստուածային մայրութեան ուսմունքը։ Չափազանցուած իրապաշտութիւնը, սակայն, որով դոգէթների դէմ հաստատում է Մարիամի իրական մայրութիւնը, մղում է նրան մերժելու Մարիամի կուսութիւնը Յիսուսի ծնունդի ընթացքում եւ յետոյ։ Ըստ Տերտուղիանոսի, Մարիամը հաւատաց Գաբրիէլի աւետմանը եւ այսպիսով արժանացաւ իր մէջ հիւրընկալելու կեանքը կրող Խօսքը (առարկայական փրկութեանը տրուած մարմնական հեռաւոր համագործակցութիւն)։ Բայց իր մայրական այսքան բարձր պաշտօնը կատարելուց յետոյ, իբր թէ վերադարձաւ միւս բոլոր կանանց ընդհանուր կազմի մէջ, ենթակայ նրանց միեւնոյն թերութիւններին, եւ այլն։ Տերտուղիանոսը, ուղղափառութիւնից անցնելով մոնիստիկական հերետիկոսութեանը, մարեմաբանութեան ասպարէզում առաջինն է՝ որ կասեցնում է յառաջխաղացումը եւ իր նախորդների համեմատ ցուցաբերում է մի բացասական յետադիմութիւն։ Իր մեկնաբանութիւններում, Տերտուղիանոսը չի հետեւում ուղղափառ աւանդութեանը, այլ կայացնում է անձնական դատավճիռներ, որոնք խստորէն դատապարտուել են Եկեղեցու ժողովների կողմից։

գ) **4րդ դարում**։ 325 թուականին, առաջին անգամ լինելով (այս անգամ անկասկածելի վստահութեամբ) գտնում ենք Theotòkos եզրը Աղեքսանդր Աղեքսանդրացու Նամականերից մէկում, ուղղուած Աղեքսանդր Կոստանդնուպոլսեցուն. «Տէրն մեր Յիսուս Քրիստոս ճշմարտապէս եւ ո՛չ երեւութապէս կրեց [մարդկային] մարմինը, [որը վերցրեց] Մարիամ Աստուածածնից»։

Theotòkos եզրը Արեւմուտքում առաջին անգամ գործածել է Սբ. Ամբրոսիոս Մեդիոլանցին։

4րդ դարի առաջին կէսից արդէն, Theotòkos եզրը սկսում է գործածուել բոլորի կողմից։

Սբ. Ամբրոսիոսը, Արեւմուտքում արեւելեան Theotòkos դասական եզրը գործածելու արժանիքից բացի, նաեւ առաջինն է՝ որ ուրուագծում է Քրիստոսի խորհրդաւոր Մարմնի բոլոր անդամների նկատմամբ Մարիամի հոգեւոր մայրութեան ուսմունքը, մի ուսմունք՝ որն իր կատարելութեանն էր հասնելու Սբ. Օգոստինոսի աշխատութիւններում։ Այս ուսմունքի հիմքը, Սբ. Ամբրոսիոսի համար, հիմնականում կայանում է խաչուած Յիսուսի կողմից Մարիամին եւ Յովհաննէսին ուղղուած խօսքերի մէջ, որոնցում Սուրբ Հայրապետը տեսնում է Մարիամի հոգեւոր տիեզերական մայրութեան հռչակումը։ Մարիամի մնայուն կամ մշտնջենաւոր կուսութեան ուսմունքը Սբ. Ամբրոսիոսի մարեմաբանութեան կենտրոնական կէտն է եւ մայր գաղափարը։ Մեծարում էր Մարիամին որպէս «մեղքի որեւէ արատից զերծ»։ Սբ. Ամբրոսիոսի համաձայն, եթէ Մարիամը Գողգոթայի վրայ մահանար Յիսուսի հետ, նրա հետ էլ յարութիւն կ'առնէր, որովհետեւ «նա՛ ծնեց նրան՝ որ յարութիւն էր առնելու»։ Իրաւացիօրէն է Սբ. Ամբրոսիոսը կոչուել «լատին մարեմաբանութեան հայրը»։

4րդ դարում, մարեմաբանութեան ասպարէզում առաջանում են հիմնականում երկու խնդիրներ. Ամենասրբուհի Մարիամի մնայուն կուսութիւնը եւ նրա երկրային կեանքի վախճանը։ Արեւելքում ծագել էր մի հերետիկոսութիւն, որը մերժում էր Մարիամի կուսութիւնը Յիսուսի ծննդեան ընթացքում եւ յետոյ։

Սրանց դէմ ուղղափառութիւնը պաշտպանեց Սբ. Եպիփանոսը: Նոյն հերետիկոսութեանը Արեւմուտքում հետեւում էին Էլվիդիոսը եւ Յովինիանոսը: Այս վերջինների դէմ ուղղափառութիւնը պաշտպանեց Սբ. Հերոնիմոսը:

Մարիամի երկրային կեանքի վախճանի վերաբերեալ առաջին հարցերը առաջին անգամ հրապարակ իջան 377 թուականին, որոնց վերաբերեալ արտայայտուեց Սբ. Եպիփանոսը: Նրա գրութիւնը լի է մեծարանքով, Աստուծոյ վեհութեան առաջ պաշտամունքով, բայց միեւնոյն ժամանակ մարդկային խոհեմութեամբ ու զգուշութեամբ: Սբ. Հայրապետը, վերջիվերջոյ, սահմանափակում է ասելով՝ որ Մարիամի վախճանը եղաւ այնպիսին՝ ինչպիսին վայել ու պատշաճ էր նրան: Աստուածաշունչը, - ասում է նա, - ոչինչ չի յայտնում Ամենասրբուհի Մարիամի երկրային կեանքի վախճանի վերաբերեալ, թէ ինչպէս է տեղի ունեցել դա. Աստուածաշնչում, իրօք, չի պատմում «ո՛չ Մարիամի մահը, ո՛չ թէ մահացել է, ո՛չ թէ թաղուել է, ո՛չ թէ չի թաղուել ...»: Պատճա՞ռը: Ահաւասիկ. «Աստուածաշունչը կատարեալ լռութիւն է պահպանել՝ հրաշքի մեծութեան պատճառով, որպէսզի չափագանց զարմանքով չտպաւորուէին մարդկանց հոգիները»: Եւ ապա եզրակացնում է. «Ինչ վերաբերում է ինձ, չեմ համարձակում խօսել այդ մասին: Այն պահպանում եմ մտքումս եւ լռում եմ»: Յոյց տալուց յետոյ, որ Ղուկաս 2, 35 հատուածը մղում է մտածելու՝ թէ Մարիամը մահանալու էր մարտիրոսացած, իսկ Յայտնութիւն 12, 14 հատուածն ընդհակառակն՝ մղում է մտածելու՝ թէ ողջ վիճակում տեղափոխուելու էր երկինք, հետեւում է ասելով. «Կարելի է ընդունել, որ սա կատարուել է Մարիամի անձում: Չեմ հաստատում, սակայն, բացարձակ կերպով, եւ չեմ ասում՝ թէ նա չի մահացել: Բայց չեմ համարձակում նաեւ ասել՝ թէ մահացել է: Աստուածաշունչը, յիշաւի, բարձրացել է մարդկային հոգուց գերիվեր եւ այս կէտը թողել է անորոշութեան մէջ, այս անհամեմատելի կոյսի հանդէպ մեծարանքից մղուած, նրա վերաբերեալ որեւէ ցածր ու մարմնական մտածութեան առաջ դռները փակելու համար: Մահացե՞լ է: Չգիտենք»:

դ) **Տրդ Գարուն**: Այս դարում յաղթանակում է աստուածային մայրութեան ուսմունքը եւ սկսում են աստուածաբանական քննարկումները անարատ յղութեան, հոգեւոր մայրութեան եւ Վերափոխման հարցերի շուրջ:

Theotòkos եզրի լայն տարածումը առաջացրեց նաեւ բուռն վիճաբանութիւն՝ թէ այդ եզրի գործածումն արդեօք օրինաւոր էր կամ ոչ: «Աստուածամայր» եզրի դէմ ելան թէոդորոս Մոփսուեստացին, իսկ յետոյ, ծայրայեղ համարձակութեամբ, Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոս Նեստորը: Այս վերջինի հերետիկոսութիւնները մերժելու համար հրապարակ իջաւ Մարիամի աստուածային մայրութեան մեծագոյն պաշտպանը՝ Աղեքսանդրիայի պատրիարք Կիլեզը: Հռոմի Քահանայապետ Չելեստինոս Առաջինի հեղինակութեամբ ու հրամանով եւ Սբ. Կիլեզի կողմից կազմակերպուելով, 431 թուականի Եփեսոսի ժողովը (Տիեզերական երրորդը) քննարկեց հարցը եւ հանդիսաւոր կերպով դատապարտեց Նեստորին եւ հռչակեց Մարիամի աստուածային մայրութիւնը որպէս քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւն (դոգմա):

Տրդ դարում, առաջին անգամ լինելով, Սբ. Օգոստինոսի գրութիւններում իր իրական իմաստով դրւում եւ քիչ թէ շատ լուծում է Մարիամի Անարատ Յղութեան մեծ խնդիրը: Այս ուսմունքը առաջացաւ Ադամից (բնական ճանապարհով) բոլոր սերունդների վրայ սկզբնական մեղքի համընդհանուր տարածման ուսմունքից, մի ուսմունք՝ որը վճռականօրէն պաշտպանում էր Սբ. Օգոստինոսի կողմից եւ մերժում էր պեղազականներից: Այս վերջիններից մէկը, Յովինիանոս Էքլանացին, Պեղազիոսի ընկերն ու հետեւորդը, յանդիմանում էր Սբ. Օգոստինոսին, որովհետեւ վերջինս, սկզբնական մեղքի համընդհանուր տարածման իր ուսմունքով, իբր թէ Մարիամին նոյնպէս ենթարկում էր սատանային, քանի որ

«իր ծննդեան վիճակով» նա նոյնպէս պէտք է որ վարաքուած լինէր սկզբնական մեղքով: Սբ. Օգոստինոսը վճռականօրէն մերժում է այդ զրպարտութիւնը. «Մենք Մարիամին ոչնչով չենք ենթարկում սատանային, հիմնուելով իր ծննդեան վիճակի վրայ»: Ինչո՞ւ: «Որովհետեւ, – պատասխանում է Սուրբ Հայրապետը, – ծննդեան վիճակը [այսինքն՝ սկզբնական մեղքով ծնուելու եւ հետեւաբար սատանայի որոշակի իշխանութեանը ենթակայ լինելու վիճակը] լուծարուեց վերածնութեան շնորհով»: Շնորհը, – բացատրում է Սբ. Օգոստինոսը, – Աստուծոց տրուած է մարդկանց «ո՛չ միայն մեղքերը ներելու համար [այսինքն՝ որպէսզի ազատուեն գործած յանցանքից], այլ նաեւ՝ որպէսզի փորձութեան չենթարկուեն [այսինքն՝ որպէսզի վերապահուեն յանցանքը գործելուց]»: Պեղազականները չէին կամենում ընդունել շնորհի այս անհրաժեշտութիւնը: Յստակ երեւում է, որ «վերածնութեան վիճակը» (որը Սբ. Օգոստինոսը հակադրում է «ծննդեան վիճակին») «վերապահող» շնորհ է (ո՛չ թէ «ազատող»), այլապէս՝ Սբ. Օգոստինոսը կ'ընկնէր ակնյայտ ինքնահակասութեան մէջ, որ է. կը մերժէր Ամենասրբուհի Մարիամին ենթարկել սատանային, բայց միեւնոյն ժամանակ՝ կ'ենթարկէր:

Բացի սա, Սբ. Օգոստինոսը ամենավճռական ձեւով պաշտպանում է Աստուծածամօր կեանքի բացարձակ անարատութիւնը, այսինքն՝ որ Մարիամն իր ամբողջ կեանքի ընթացքում չի գործել եւ ոչ իսկ մէկ մեղք: Սուրբ Հայրապետը հաստատում էր, որ բոլոր մարդիկ, նաեւ ամենասուրբ վարք ունեցողները, իրենց կեանքի ընթացքում գործել են ինչ որ մի մեղք: Պեղազիտը, խարդախութեամբ թաքնուելով քրիստոնէական բարեպաշտութեան ետեւում, հակաճառում էր Սբ. Օգոստինոսին՝ որպէս օրինակ բերելով Ամենասրբուհի Մարիամին, «որի վերաբերեալ, բարեպաշտութիւնը ստիպում է մեզ դաւանել՝ թէ առանց մեղքի էր»: Սբ. Օգոստինոսը պատասխանում է. այո՛, ճիշտ է, բայց Ամենասրբուհի Մարիամը բացառութիւն է համընդհանուր օրէնքի մէջ, մի բացառութիւն՝ որ պահանջում է նրա աստուծային Որդու մեծփայելչութիւնը. «Բացառութեամբ, ուրեմն, Ամենասրբուհի Մարիամի, որի մասին ուզում եմ՝ որ երբ խօսուում է մեղքերի վերաբերեալ՝ նրա անունն անգամ չտրուի, որովհետեւ գիտենք՝ որ նրան տրուել է շնորհի մի այնպիսի գերառատութիւն, որով կարողացաւ ամէն տեսակէտով յաղթել մեղքին, որովհետեւ նա էր՝ որ արժանացաւ յղանալու եւ լոյս աշխարհ բերելու Նրան՝ ով, ինչպէս գիտենք, մեղք չունեցաւ»: Ըստ Սբ. Օգոստինոսի, Աստուծածամօր եւ մեղքի միջեւ անընդունելի, անըմբռնելի ու անմտածելի է որեւէ յարաբերութիւն:

Մարեմաբանութեան մէջ Սբ. Օգոստինոսի միւս կարեւոր արժանիքն այն է, որ առաջին անգամ լինելով յստակ խօսքերով հաստատում է Մարիամի հոգեւոր մայրութիւնը բոլոր մարդկանց նկատմամբ (մի ուսմունք՝ որն, ինչպէս տեսանք, ուրուագծուել էր Սբ. Ամբրոսիոսի կողմից): Մարիամը «հոգեւոր Մայրն է ո՛չ թէ մեր Գլխի, որ նոյն Ինքն մեր Փրկիչն է ... , այլ (հոգեւոր) Մայրն է Նրա անդամներին, որ մենք ենք, որովհետեւ իր սիրով համագործակցեց Եկեղեցու ծննդեանը, որը Մարմինն է այն Գլխի»: Այս գաղափարը մեծագոյն ազդեցութիւն է թողել հետագայ հեղինակներին վրայ:

Վերափոխման առաջին շողերը նոյնպէս սկսեցին երեւալ 5րդ դարում: Այս դարի կէսերին (ինչպէս հետեւում է Սբ. Պրոկղ Կոստանդնուպոլսեցու ձառերից), Արեւելեան Եկեղեցիներում գոյութիւն ունէր մարեմական մի տօն, որի առարկան էր Մարիամի աստուծային եւ կուսական մայրութիւնը, որը սովորաբար տօնակատարւում էր Սբ. Ծնունդից անմիջապէս յետոյ: Երուսաղէմում, ապա, այս նոյն 5րդ դարի կէսերին, նմանօրինակ մի տօն էր կատարւում (չգիտենք ինչու) Օգոստոսի 15ին: Շատ շուտով, սակայն, այս վերջին տօնը վերածուեց Ամենասրբուհի Կոյսի մահուան յիշատակութեանը: Սկսեցին հրապարակ իջնել, բնականօրէն, զանազան պարականոն գրութիւններ, որոնց մէջ հնարաւոր է նկատել երկու ուղղութիւններ. առաջինի համաձայն (որ վերագրւում է կեղծ-Յովհաննէսին), Մարիամը երկինք է վերափոխուում հոգիով, առանց մարմնի,

մինչ այս վերջինն անապական է մնում կեանքի ծառի հովանու ներքոյ, մինչեւ յարութեան օրը. ըստ երկրորդի, մինչդեռ, Ամենասրբուհի Կոյսի մարմինը յարութիւն է առնում եւ հոգու հետ միասին վերափոխուում է երկինք:

Թւում է՝ թէ 5րդ դարին է պատկանում Տիմոթէոս Երուսաղէմացի քահանայի վկայութիւնը: Սա, ոմանց կարծիքը մէջբերելուց յետոյ, որոնք սխալ էին հասկանում Սիմէոն ծերունու մարգարէութիւնը, հաստատում է՝ թէ «Կոյսը մինչեւ օրս մնացել է անմահ, որովհետեւ նա՝ որ բնակուել էր նրանում, վերափոխեց նրան դէպի վայրը Իր Համբարձման»:

ե) **Ճրդ գարո՞ւմ:** Այս դարում Արեւելքում սկսում է տօնակատարուել (պարականոն գրականութեան ազդեցութեան հետեւանքով) Ամենասրբուհի Կոյսի Ննջման տօնը: Բայց պարականոն գրականութեան երեւակայական պատմութիւններն ունենում են մի դրական հետեւանք. լինում են ինչպէս կայծեր՝ որ բոցավառում են աստուածաբանական խորհրդածութեան հոլը: Յիշարժան է Թէոտեկնոս Լիվիացու վկայութիւնը (550 թուականից յետոյ, 600ից առաջ). «Պատշաճ էր՝ որ ... աստուածակիր մարմինը, Աստծոյ ընդունարանը, աստուածացած, անապական, աստուածային լոյսով լուսաւորուած, աստուածահաճոյ հոգու հետ միասին բարձրացուէր (երկնային) փառքին»:

Ամենասրբուհի Կոյսի մարմնով վերափոխումը 6րդ դարի վերջում վկայում է նաեւ Սբ. Գրիգոր Թուրսացու կողմից (Ֆրանսա):

զ) **7րդ գարո՞ւմ:** Սբ. Սոփրոնիոսը Մարիամի անարատ մաքրութեանն է ընծայում հետեւեալ վկայութիւնը. «(Սրբերից) ոչ մէկը շնորհներով լցուեց՝ ինչպէս Դու. ոչ մէկն օրհնուեց՝ ինչպէս Դու. ոչ մէկը նախապէս մաքրագործուեց՝ ինչպէս Դու: ... Դու գերազանցում ես այն ամէնը՝ ինչը որ ամենագերազանցն է մարդկանց մէջ»: Սբ. Սոփրոնիոսի կողմից գործածուած «նախապէս մաքրագործուած» եզրի մէջ հետագայ աստուածաբանները կամեցան տեսնել «սկզբնական մեղքից վերապահուած» եզրի հոմանիշը:

7րդ դարի վերջում յայտնուում է Աստուածամօր յղացման տօնը, ինչպէս հետեւում է Յովհաննէս էուրէացու (+ մօտ 550) ձառերից: Հեղինակը հաստատում է՝ որ Աստուած յատուկ կերպով միջամտել է Մարիամի յղացման գործին, ստեղծելով նրան որպէս նոր արարած, ստեղծուած՝ սկզբնական արդարութեան վիճակում:

Միեւնոյն 7րդ դարում, Արեւմուտքում, Սբ. Իլդեֆոնսոյ Թուրեացին (+ 669), առաջին անգամ լինելով՝ մեծարում է Աստուածամօրը որպէս Թագուհի:

է) **Տրդ գարո՞ւմ:** Աստուածամօր ամբիծ Յղութեան խորհուրդը 8րդ դարում գտնում է վճռական պաշտպաններ յանձինս Սբ. Անդրէաս Կրետացու, Սբ. Յերմանոս Կոստանդնուպոլսեցու եւ Սբ. Յովհան Դամասկացու: Մարիամը, Սբ. Յովհան Դամասկացու համաձայն, «արեւի տակ միակ նորութիւնն է», «սքանչելիքների սքանչելիքը»:

Մարիամի մարմնով եւ հոգիով վերափոխումը երկնային փառքին, այս դարում ընդունւում է որպէս անկասկածելի, Սբ. Յերմանոս Կոստանդնուպոլսեցու եւ յատկապէս Սբ. Յովհան Դամասկացու կողմից:

Մարիամի մարմնով եւ հոգիով վերափոխմանը վերոյիշեալ Հայրերը սերտօրէն կապում են Մարիամի թագաւորական յաղթանակը: Սբ. Անդրէաս Կրետացու կողմից Մարիամն անուանւում է «Եկեղեցու Թագուհի», «տիեզերական Թագաւորի՝ Աստծոյ առաջ մարդկութեան Թագուհի»: Նոյն Սուրբը բացականչում է. «Երիցս Թագուհի, Ամենասրբուհի Աստուածամայր»: Սբ. Յովհան Դամասկացին խորացնում է Մարիամի թագաւորութեան խորհուրդը՝ մատնանշելով դրա աստուածաբանական իրական իմաստը. աստուածային մայրութիւնը. «Ամենայն արդարութեամբ եւ

իրաւունքով, – գրում է Սուրբ Հայրապետը, – Աստուծոյ Մայրն է, եւ Տիրուհին եւ տիրապետութիւնն ունի ամէն ինչի վրայ, նա՛ որ Արարչի աղախինը եղաւ եւ Մայրը»:

Տրդ դարով, մարեմաբանութեան ասպարէզում աւարտւում է Հայրախօսական շրջանը: Հետագայ դարերում, աստուածաբանները կրկին վերադառնում են վերոյիշեալ Սուրբ Հայրապետների կողմից նշուած կէտերին, խորացնում են դրանք աստուածաբանական խորհրդածութիւններով, ճոխացնում են բանաստեղծական ճառերով ու քարոզներով, մեծարելով Աստուծոյ վեհագոյն Մօրը եւ մեր Մօրը. Մարիամին:

ՀԱՒԱՏՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՐԵՄԱԿԱՆ ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ (ԴՈՉՄԱ)

Այս հատուածում կը քննարկենք Հաւատքի Ուղղափառ Վարդապետութեան մարեմական չորս ճշմարտութիւնները. աստուածային մայրութիւնը, մնայուն կուսութիւնը, անարատ յղութիւնը եւ վերափոխումը երկինք:

ա) *Մարիամի աստուածային մայրութիւնը*: Եկեղեցին, տօնակատարելով ծիսական տարին, իւրայատուկ սիրով մեծարում է Ամենասրբուհի Մարիամ Աստուածածնին, որն անբաժանելիօրէն միացած է իր Որդու կողմից իրականացուած փրկագործութեանը: Եկեղեցին, յանձինս Մարիամի, տեսնում եւ մեծարում է Փրկագործութեան ամենագերագանց պտուղը, եւ նրանում ուրախութեամբ դիտում է, ինչպէս մաքրագոյն պատկերի մէջ, այն՝ ինչ ինքը ամբողջովին կամենում է լինել եւ յուսով է՝ որ լինելու է:

Մարդկութեան փրկութեան աստուածային ծրագրերում, Աստուծոյ Որդու մարդեղութեան շնորհիւ, Մարիամը մասնակցում է այդ ծրագրերի իրականացմանը իր նախասահմանմամբ՝ լինելու Քրիստոսի Մայրը, եւ այս իսկ պատճառով՝ մնում է անբաժանելիօրէն միացած իր աստուածային Որդու անձին եւ գործունէութեանը:

Մարիամի աստուածային մայրութեան ճշմարտութիւնը, հետեւաբար, մարեմական աստուածաբանութեան հիմնական ճշմարտութիւնն է, որից, ինչպէս խորհրդաւոր աղբիւրի հոսանքից, բխում է Մարիամի եզակի շնորհալիութիւնը եւ այնպիսի արժանապատուութիւնը՝ որ Աստուծոյ յետոյ ամենամեծն է՝ որ կարելի է մտածել կամ երեւակայել:

Փարուելով այս ճշմարտութեանը, մենք հաւատում ենք՝ որ Մարիամը միաժամանակ Աստուծոյ Աղախինն է եւ Մայրը, Կոյս եւ Մայր:

Մարիամի աստուածային մայրութեան հաւատքը ենթադրում է, որ հաւատացեալը ուղիղ ճանաչողութիւն ունենայ իպոստատիկ Միութեան խորհուրդի շուրջ: Եփեսոսի Ժողովում էր (431թ.), որ սահմանուեց Խօսքի աստուածային բնութեան եւ մարդկային բնութեան միաւորման կերպը Յիսուս Քրիստոսի մէկ եւ միակ Անձում: Այս նոյն Ժողովում էր, որ միաժամանակ հռչակուեց նաեւ մարեմական այս առաջին ճշմարտութիւնը (դոգման): Նեստորականների կողմից յարուցուած ընդդիմութեանը՝ թէ իբր Մարիամը չձնեց երկնաւոր Հօր Խօսքը, Սբ. Կիւրեղ Աղեքսանդրացին յստակ կերպով պատասխանում է՝ որ ինչպէս միւս բոլոր մայրերը, որ ծնում են մեր մարմինների նիւթական բաղադրութիւնը՝ բայց ո՛չ հոգիները, ամենայն ճշմարտութեամբ կոչւում են մայրեր, նմանապէս Մարիամը, իր Որդու մէկ եւ միակ Անձի հետեւանքում, ստացել է տիտղոսը եւ իսկապէս Աստուծոյ Մայրն է:

Որպէս մարդացած Խօսքի Մայրը, Ամենասրբուհի Կոյսը եզակի եւ վերանցական հաղորդակցութեան մէջ է դրուել Հայր Աստուծոյ, Որդու եւ Սուրբ

Հոգու հետ, այնպես՝ որ իր արժանապատուութիւնը գերազանցում է բոլոր արարածներին:

Միաժամանակ, Մարիամն անբաժանելիօրէն միացած է իր աստուածային Որդու Անձին եւ գործունէութեանը ո՛չ միայն մայր-որդի ֆիզիքական կապի ուժով, այլ յատկապէս Քրիստոսի հետ ունեցած իր համագործակցութեամբ:

Եկեղեցին հաւատացեալների ուշադրութիւնը հրաւիրում է նաեւ Մարիամի ներքին հոգեւոր տրամադրութիւնների վրայ, յատկապէս ընդգծելով նրա հաւատքը եւ սէրը, հնազանդութիւնն ու խոնարհութիւնը, որոնցով ամբողջովին փարուեց Աստուծոյ փրկարար կամքին եւ արժանացաւ դառնալու Փրկչի Մայրը եւ Նրա վեհանձն համագործակիցը փրկութեան գործում: Մարիամը, իր հաւանութիւնը տալով աստուածային խօսքին, դարձաւ Յիսուսի Մայրը, եւ ամբողջ հոգիով եւ առանց մեղանչական որեւէ խոչընդոտի փարուելով Աստուծոյ փրկարար կամքին՝ որպէս Աստուծոյ Աղախին իր անձն ամբողջովին ընծայեց իր Որդու Անձին ու գործունէութեանը, ծառայելով փրկագործութեան խորհուրդին, Նրան ենթակայ եւ Նրա հետ, ամենակալ Աստուծոյ շնորհով: Ամենասրբուհի Կոյսը, աստուածային Խօսքի մարդեղութեամբ, ի յաւիտենից նախասահմանուած լինելով դառնալու Աստուծոյ Մայրը, աստուածային Նախախնամութեան տնօրինմամբ այս երկրի վրայ եղաւ աստուածային Փրկչի Մայրը, ամբողջովին եզակի վեհանձն համագործակիցը եւ Տիրոջ խոնարհ Աղախինը: Քրիստոսին յղանալով, ծնելով, սնելով, տաճարում Հօրը ներկայացնելով, խաչի վրայ մահացող Որդու հետ տառապելով, ամբողջովին իւրապատուկ կերպով համագործակցեց Փրկչի գործունէութեանը հնազանդութեամբ, հաւատքով, յոյսով, բոցավառ սիրով, վերանորոգելու համար հոգիների գերբնական կեանքը:

Հարկաւոր է, հետեւաբար, զանազանել Մարիամի աստուածային մայրութեան երկու տեսակէտները. ֆիզիքականը (Քրիստոսին յղանալով, ծնելով, սնելով, ...) եւ հոգեւորը (հնազանդութեամբ, հաւատքով, յոյսով, բոցավառ սիրով): Այս երկու տեսակէտների կատարեալ հաւասարակշռութեան եւ փոխադարձ ամբողջացման մէջ է կայանում Մարիամի աստուածային մայրութեան ճշգրիտ ըմբռնումը:

բ) **Մարիամի մնայուն կուսութիւնը:** Քրիստոնէական հնագոյն շրջանի բոլոր Հաւատամքները Մարիամի անուանը առանց բացառութեան աւելացնում են «Կոյս» ածականը, աւելին՝ երբեմն Աստուածամայրը պարզապէս անուանում է «Կոյս», առանց յիշելու Մարիամ անունը կամ միւս տիտղոսները:

Մարիամի մնայուն կուսութեան ճշմարտութիւնը վերաբերում է երեք հանգրուանների: Ուղղափառ Հաւատքի Դաւանութեան համաձայն, Մարիամը կոյս էր Յիսուսի ծնունդից առաջ, այսինքն՝ յղացաւ առանց տղամարդու միջամտութեան. կոյս էր Յիսուսի ծննդեան ընթացքում, այսինքն՝ անխախտելի մնաց նրա մարմնական ամբողջականութիւնը. կոյս մնաց Յիսուսի ծնունդից յետոյ, այսինքն՝ չունեցաւ ամուսնական ոչ մի յարաբերութիւն եւ ուրիշ ոչ մի զաւակ:

Եկեղեցու Սուրբ Հայրապետների գրութիւնների ուշադիր ընթերցման ժամանակ նկատուում է, որ Մարիամի մնայուն կուսութիւնը նկատուում է իրական փոխադարձ կապակցուածութեան մէջ՝ Քրիստոսի աստուածութեան եւ Մարիամի մայրութեան միջեւ: Քրիստոսի՝ Մարդ-Աստուծոյ յղացման եզակիութիւնը, Ամենասուրբ Երրորդութեան երեք Անձերի հետ հաղորդակցութեան հետ միասին, բացառում է ուրիշ որեւէ մարդկային յարաբերութիւն: Հետեւաբար, մարեմական այս ճշմարտութիւնը աղքատացնել կը նշանակէր՝ եթէ Մարիամի կուսութիւնը վերածուէր սոսկ կենսաբանական իրականութեան եւ հաշուի չառնուէր հոգեւոր կուսութեան արմատը, որպէս ամբողջական բացառիկ նուիրում Քրիստոսին: Այս կուսութիւնը հայրախօսական աւանդութեան մէջ մատնանշում է յատկապէս Մարիամի հաւատքի մէջ, որի միջոցով նա ամբողջովին ընդունեց Աստուծոյ խօսքը եւ գործը:

Ինչպէս նաեւ, Մարիամի կուսութիւնը նրա հոգեւոր կուսութեան, այսինքն՝ Աստուծոն անմնացորդ նուիրուելու խորհրդանշանը լինելուց բացի, հայրախօսական

աւանդութեան կողմից համարուել է նշանը Քրիստոսի աստուածութեան եւ այլաբանական պատկերը Եկեղեցու կուսական պողաբերութեան: Մարեմական ճշմարտութիւններից ոչ մէկը թերեւս այնքան կապակցուած չէ Քրիստոսին եւ Եկեղեցուն, որքան ճշմարտութիւնը Մարիամի մնայուն կուսութեան:

Աւանդութեան մէջ, Մարիամի մնայուն կուսութեան առանձնաշնորհը նկատուում է աւելի Քրիստոսի՝ քան Մարիամի տիտղոսը: Քրիստոսի կուսական ծնունդը, իրօք, նկատուում է որպէս Հօրից Խօսքի յաւիտենական եւ անտեսանելի ծննդեան բացայայտումը ժամանակի մէջ: Միեւնոյն ժամանակ, նկատուում է որպէս այլաբանական պատկերը հոգիների մէջ Քրիստոսի հոգեւոր ծննդեան: Այս իսկ պատճառով, եւս մէկ անգամ՝ Մարիամի կուսութիւնը այլաբանական պատկերն է Եկեղեցու կուսական պողաբերութեան: Հայրախօսական աւանդութեան համաձայն, Մարիամն իր մարմնում իրագործում է այն՝ ինչը որ Եկեղեցին իրագործում է հոգեպէս իր հաւատքի մէջ, այսինքն կուսութիւնը՝ պողաբերութեամբ հանդերձ: Յիրաւի, Եկեղեցին ճիշտ որովհետեւ հաւատում է եւ որովհետեւ հաւատարիմ է Քրիստոսի խօսքին (կուսութիւն), Քրիստոսի համար նոր եղբայրներ ու քոյրեր, այսինքն՝ Աստուծոյ որդիներ ու դուստրեր է ծնում (պողաբերութիւն) «Ղրից եւ Հոգուց» (Մկրտութեամբ): Այո՛, Եկեղեցին նոյնպէս, դիտելով Մարիամի ամբիծ սրբութիւնը, հետեւելով նրա օրինակին եւ հաւատարմօրէն կատարելով Հօր կամքը, հաւատարմութեամբ ընդունուած Աստուծոյ խօսքի շնորհիւ՝ դառնում է մայր, որովհետեւ քարոզչութեամբ եւ Մկրտութեամբ՝ նոր եւ անմահ կեանքին է ծնում զաւակներ, որոնք յղացուած են Սուրբ Հոգու գօրութեամբ եւ ծնուած են Աստուծուց: Եկեղեցին նաեւ կոյս է, որովհետեւ ամբողջական եւ մաքուր է պահում իր Փեսային ընծայուած հաւատքը եւ իր Տիրոջ Մօրը հետեւելով, Սուրբ Հոգու գօրութեամբ՝ որպէս կոյս ամբողջական է պահում հաւատքը, հաստատուն՝ յոյսը, անկեղծ՝ սէրը:

դ) **Մարիամի Անարատ Յղութիւնը**: Մինչ Մարիամի մնայուն կուսութեան ճշմարտութիւնը մեծարում է Ամենասրբուհի Մարիամի մարմնի սրբութիւնն ու սրբազանութիւնը, որն եղաւ «Աստուծոյ Տապանակը», որից Խօսքը վերցրեց մարդկային բնութիւնը, Անարատ Յղութեան ճշմարտութիւնը բացայայտում է սրբութիւնը՝ որով Մարիամը զարգարուած էր իր գոյութեան առաջին վայրկեանից իսկ սկսած: Թէեւ Անարատ Յղութիւնը որպէս հաւատքի ճշմարտութիւն (դոգմա) հռչակուել է միայն 150 տարի առաջ, այնուամենայնիւ՝ քրիստոնէութեան ամբողջ ընթացքում, երկար դարեր շարունակ, հաւատքի զգացումը քրիստոնեայի հոգու խորքում միշտ ընկալել է տուել Մարիամի եզակի սրբութիւնը: Սբ. Յերմանոս Կոստանդնուպոլսեցու, Անաստաս Անտիօքացու, Աբ. Անդրէաս Կրետացու, Սբ. Սոֆրոնիոսի եւ ուրիշ արեւելեան Հայրապետների գրութիւններում, Մարիամը մեծարուում է որպէս «ամբողջովին սուրբ», «մեղքի որեւէ արատից զուրկ», «Սուրբ Հոգու կողմից գրեթէ կաղապարուած եւ նոր արարած դարձուած»: Գաբրիէլ հրեշտակապետը ողջունում է նրան որպէս «շնորհներով լի»: Հայոց մեր աւանդութեան մէջ էլ Աստուածամայրը շարունակ անուանում է «Ամենօրհնեալ Կոյս»:

Հետեւելով Սուրբ Հայրապետների այս ուսուցումներին, մենք հաւատում ենք՝ որ Ամենասրբուհի Կոյս Աստուածածին Մարիամը իր յղացման առաջին պահից իսկ Աստուծոյ կողմից մի յատուկ առանձնաշնորհութեամբ վերապահուել է սկզբնական մեղքի վարակից եւ իր կեանքի ամբողջ ընթացքում չի գործել եւ ոչ իսկ մէկ մեղք: Ամենասրբուհի Կոյս Աստուածամօր այս սրբութիւնը եւ շնորհալիութիւնը նախեւառաջ պահանջուած են նրա աստուածային մայրութեան կողմից: Աստուած Մարիամին լիացրեց շնորհներով՝ որոնք համապատասխանում էին իր կողմից յանձն առնուելիք պաշտօնին: Երբ խորհրդածուում ենք այն իւրապատուկ եւ ամբողջովին եզակի հաղորդակցութեան մասին, որ Մարիամն իր աստուածային մայրութեան պատճառով ունի Աստուծոյ հետ, առանց որեւէ դժուարութեան ենք հասկանում այս առանձնաշնորհութեան ոչ միայն պատշաճութիւնը, այլ նաեւ բարոյական անհրաժեշտութիւնը:

Արեւելեան Հայրապետների մօտ, Աստուածամօր եզակի սրբութեան հաստատումները բխում են հիմնականում Եւա-Մարիամ զուգահեռութիւնից: Հիմնուելով արարչագործութեան աստուածաշնչեան պատմութեան վրայ, Արեւելեան Հայրապետները Մարիամին այլաբանօրէն ներկայացնում են որպէս մաքուր ու ամբիժ հողից ստեղծուած, ինչպէս առաջին Եւան: Մարիամին ներկայացնում են Աստծոյ կողմից այսպէս կադապարուած, որովհետեւ իր միջոցով, իր աստուածային մայրութեան շնորհիւ՝ կործանուելու էր օձի իշխանութիւնը: Կնոջ այս նոր արարչութեամբ՝ սկսում է մարդկութեան նոր արարչութիւնը:

Արեւմտեան աստուածաբանները, մինչդեռ, քանի որ սկզբից ի վեր պայքարում էին պեղազական հերետիկոսութեան դէմ, շեշտը դնում էին Մարիամի Անարատ Յղութեան յատկապէս քրիստոսաբանական կողմի վրայ: Աստուածաբանական երկար քննարկումներից յետոյ, Արեւմուտքը եկաւ այն եզրակացութեան, որ սկզբնական մեղքից Մարիամի վերապահումը ամենակատարեալ եւ ամենավսեմ իրականացումն է այն փրկութեան՝ որ պարզեւեց մեզ Քրիստոս: Մարիամը սկզբնական մեղքից վերապահուեց՝ իր աստուածային Որդու արժանիքների հեռանկարով:

Միմեանց ձուլելով Եկեղեցու Արեւելեան եւ Արեւմտեան աւանդութիւնները, Մարիամի Անարատ Յղութեան ճշմարտութիւնը հասկանում ենք երկու ուղղութեամբ. առաջին, որպէս Փրկչի մարդեղութեան պատրաստութիւն. երկրորդ, որպէս մարդկութեան վերանորոգման առաջին պտուղ, սկիզբը նոր արարչութեան: Կամ ուրիշ խօսքերով. եթէ մի կողմից Մարիամի կուսութիւնը կարող է նկատուել որպէս հայելացումն ու ճառագայթումը իր Որդու աստուածութեան, միւս կողմից՝ Մարիամի Անարատ Յղութիւնը կարող ենք նկատել իբրեւ Քրիստոսի յաղթանակը որպէս մարդացած Խօսք, մարդկութեան Փրկիչ:

Մարիամի անարատ սրբութիւնը այն նպատակակէտն է՝ որին ձգտում ենք Քրիստոսի հաւատացեալներս: Այն՝ ինչը որ եղաւ եւ է Մարիամը, մենք նոյնպէս յուսով ենք՝ որ լինելու ենք Աստծոյ Արքայութիւնում:

դ) Մարիամի Վերափոխումը Երկինք: Վերափոխման մարեմական ճշմարտութիւնը թագադրումն է Մարիամի աստուածային մայրութեան, մնայուն կուսութեան եւ սկզբնական մեղքից վերապահման: Այս ճշմարտութիւնը բանաձեւուած է հետեւեալ կերպ. «Աստծոյ Անարատ Մայր միշտ Կոյս Մարիամը, աւարտելով երկրային կեանքի իր ընթացքը, հոգիով ու մարմնով վերափոխուեց երկնային փառքին»:

Այս բանաձեւում, Եկեղեցին մատնանշում է հաւատքի տուեալ կէտի ենթական եւ առարկան. ենթական Աստծոյ Անարատ Մայրն է, միշտ Կոյս Մարիամը. առարկան՝ նրա մարմնաւոր վերափոխումն է երկինք: Ասելով «աւարտելով երկրային կեանքի իր ընթացքը», Եկեղեցին, հետեւելով Սբ. Եպիփանոսին, յստակ կերպով չի հաստատում՝ թէ ինչպիսին է եղել այդ աւարտը: Աւանդաբար, Աստուածամօր կեանքի աւարտը քրիստոնեաները դարերի ընթացքում կոչել են «Ննջումն Մարիամու», որն անպայման չի արտայայտում մահուան իմաստը: Հետեւաբար, Վերափոխման մարեմական ճշմարտութիւնը չի վերաբերում ուղղակիօրէն Աստուածածնի մահուանը, այլ՝ մարմնի անապականութեանը, յարութեանը եւ վերափոխմանը երկինք:

Հնագոյն աւանդութիւնը Մարիամի Վերափոխումը նկատում էր որպէս հետեւանքը նրա անարատութեան, որովհետեւ քանի որ մահուան հետեւանքով մարմնի փտութիւնն ու քայքայումը մեղքի պատիժն է, Մարիամի Վերափոխումը երկնային փառքին՝ հետեւանքն է նրա Անարատ Յղութեան եւ մնայուն կուսութեան: Իսկ միջնադարեան արեւմտեան աստուածաբանները Վերափոխումը կապակցում էին աստուածային մայրութեան հետ, հաստատելով. «Քրիստոսի մարմինը Մարիամի մարմինն է»: Հետագայում, Վերափոխումը սկսում է կապակցուել յատկապէս Անարատ Յղութեան հետ, որպէս սատանայի, մեղքի եւ մեղքի հետեւանքների հանդէպ Քրիստոսի կողմից յանձինս Մարիամի կրած յաղթանակի թագադրում եւ կատարելագործում: Մարիամը Տիրոջ կողմից

փառաւորում է որպէս տիեզերքի Թագուհի, որովհետեւ Մայրն է տէրերի Տիրոջ, մեղքին ու մահուանը Յաղթողի: Այսպիսով, երեւում է Վերափոխման ճշմարտութեան ամբողջ քրիստոսաբանական իմաստը. Քրիստոս, մեղքին ու մահուանը Յաղթողը, յանձինս Մարիամի կրում է իր ամենամեծ յաղթանակը, իր Մօրը մեղքից վերապահելով եւ նրան հոգիով ու մարմնով երկնային փառքին վերափոխելով: Այսպիսով, Մարիամը, երկինք վերափոխուած, գրաւականն է Քրիստոսի բոլոր հաւատացեալների ապագայ յարութեան ու փառաւորման. այսպիսով, Մարիամը յոյսի ու մխիթարութեան աղբիւր է Աստուծոյ ժողովուրդի համար, որ սպասում է Արքայութեան հռչակմանը:

Եզրակացնելով, մարեմական ճշմարտութիւնների այս ծայրաստիճան համառօտ ներկայացումից յետոյ կարող ենք ասել՝ որ Մարիամը, փրկութեան պատմութեանն ընծայուած իր սերտ մասնակցութեամբ ու համագործակցութեամբ, այսպէս ասած վերամիաւորում ու ցոլացնում է քրիստոնէական հաւատքի կէտերը: Կարող ենք ամենայն վստահութեամբ հաստատել, որ չկայ քրիստոնէական հաւատքի ոչ մի ճշմարտութիւն՝ որն իր իրականացումն ու հայեւացումը չգտնի Ամենասրբուհի միշտ Կոյս Աստուածամօր անձում:

ՄԱՐԻԱՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԾԷՍՈՒՄ

ա) **Ընդհանուր գծեր:** Մարիամի ծիսական մեծարումը Արեւելքում՝ ինչպէս Արեւմուտքում, անձնական՝ կամ խմբային, ծիսական՝ կամ ոչ, պատուում է երկու առանցքների շուրջ: Առաջինը Մարիամ Աստուածածնի բացառիկ արժանապատուութեան ու սրբութեան մեծարումն է: Երկրորդը. Քրիստոսի՝ միակ Միջնորդի առաջ նրա հզօր բարեխօսութեան անդադար եւ վստահասիրտ հայցումը: Արդէն «Ընդ հովանեաւ քո ապաւինիմք» աղօթքը, որն արեւելեան ծագում ունի եւ շարադրուած է Յրդ դարում, Մարիամին անուանում է Աստուածամայր, ամենօրհնեալ եւ փառաւորեալ Կոյս, խնդրում է նրանից օգնութիւն մեր ամէն տեսակ կարօտութիւններում եւ ազատում բոլոր վտանգներից: Այս աղօթքից բացի, Արեւելեան Ծէսի Պատարագներում Յրդ դարից սկսած յիշատակում է նաեւ Մարիամը: Հետեւաբար, Արեւելեան Եկեղեցին իր առաջին ժամանակներից ի վեր յատուկ յարգանք ունի Ամենասրբուհի Կոյս Աստուածամօր հանդէպ:

բ) **Ծիսական քօները:** Աստուածամօր հիմնական տօները, սակայն, հաստատուում են Յրդ դարից սկսած. Մարիամի Ծնունդը (8 Դեկտ.), տաճարին Ընծայումը (21 Նոյ.), Հանդիպումը Սիմէոնի հետ (2 Փետր.), Աւետումը (25 Մարտ), Ննջումը կամ Վերափոխումը (15 Օգոստ.), Աննայի Յղացումը (9 կամ 8 Դեկտ.): Արեւելեան Եկեղեցիներից ոմանք ունեն նաեւ իրենց իւրայատուկ մարեմական տօները. սերմնացանի պաշտպան Տիրուհի (15 Յունուար), հասկերի Տիրուհի (15 Մայիս), խաղողհաւաքի Տիրուհի (15 Օգոստ.): Ղպտի եւ եթովպական Եկեղեցիներում, ամէն ամսուայ 21ը նուիրուած է Մարիամին:

գ) **Պատարագի ընթացիւմ եւ ժամերգութիւններ:** Արեւելեան բոլոր Ծէսերը Պատարագի ընթացքում երգում են Հաւատամքը, որի մէջ դաւանում են իրենց հաւատքը մարմնացած Խօսքի հանդէպ, որը Սուրբ Հոգու ներգործութեամբ մարմնացաւ եւ մարդացաւ Սուրբ Կոյս Մարիամի արգանդում: Բազում ժամամուտներ նուիրուած են Աստուածածնին: Ողջերի ու ննջեցեալների համար կատարուող բարեխօսական աղօթքների ժամանակ, բոլոր Սրբերին անուանակոչելուց առաջ եւ յետոյ միշտ յիշում է Աստուածամայրը: Պատարագի ուրիշ հատուածներում նոյնպէս, Տիրամայրը յիշատակում է բազում անգամներ.

բիւզանդական եւ հայկական Ծէսուժ, իւրաքանչիւր միջնորդական աղօթքի աւարտին. ղպտիններն ու եթովպացիները, ամէն անգամ՝ որ խնկարկում են նրա սրբապատկերը. քաղդէացիներն ու մալաբարները, երբ քահանան հացն ու գինին դնում է խորանի վրայ՝ ասում է. «Փառք Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն: Թող որ խորանի վրայ ներկայ լինի Սուրբ Կոյս Աստուածամօր յիշատակը»:

Ինչ վերաբերում է ժամերգութիւններին, Արեւելեան բոլոր Ծէսերը լի են բանաստեղծական սքանչելի աղօթքներով ու շարականներով, որոնք յիշատակում են Քրիստոսի, Մարիամի եւ բոլոր Սրբերի խորհուրդները, ո՛չ միայն տօնական օրերին, այլ՝ ամբողջ շաբաթուայ ընթացքում:

դ) Արեւելեան Ծէսերից իւրաքանչիւրի առանձնայատկութիւնները:

1. **Բիւզանդական Ծէսը:** Բիւզանդական Ծէսի եկեղեցիներում, Աւագ Խորանի սրբապատի վրայ միշտ ներկայ է Տիրամօր սրբապատկերը. ծիսական որեւէ արարողութեան ընթացքում, քահանան կամ սարկաւազը խնկարկում է այն, խոնարհուում նրա առաջ եւ աղօթում. յաճախ կրկնուող այս արարքը հաւատացեալների սրտում դրոշմում եւ աճեցնում է Աստուածամօր տիեզերական, հզօր ու անհրաժեշտ բարեխօսութեան հանդէպ հաւատքը:

Պատարագի հացը պատրաստելիս, քահանան մաղգմայի վրայ դնում է նաեւ մի նշխար ի պատիւ Աստուածամօր:

Չորեքշաբթին Մարիամի օրն է, իսկ Օգոստոսը՝ նրա ամիսը: Մարիամին են նուիրուած ծիսական որոշ արարողութիւններ. հոգեհանգստեան եւ ապաշխարութեան արարողութիւնները, ինչպէս նաեւ պատերազմի վտանգից ազատուելու աղօթքը: Ի պատիւ Տիրամօր, բիւզանդական եկեղեցին ունի բազմաթիւ շարականներ, որոնց մէջ ամենագեղեցիկն ու ամենայարգուածը Աքատիստոսն է, որ վերագրւում է Ռոմանոս Երգեցողին, բաժանուում է քսանչորս տների եւ ներկայացնում է մտքերի ու զգացումների մի զմայլելի հարստութիւն:

2. **Հայկական Ծէսը:** Չորեքշաբթին Մարիամին նուիրուած օրն է, որովհետեւ աւանդաբար հաստատուում է՝ թէ Աւետումը տեղի է ունեցել մի չորեքշաբթի: Մարեմական ամենամեծ տօնը Վերափոխումն է, որին պատրաստուում ենք պահքով եւ ապա տօնում ութօրէնով:

Մարեմական գրութիւններ ունեն Գրիգոր Նարեկացին, Պետրոս Սիւնեցին, Գրիգոր Լամբրոնացին, Գրիգոր Տաթեւացին: Աստուածամօր նուիրուած եկեղեցիներն ու սրբավայրերը բազմահազար են:

3. **Ասորի Ծէսը:** Ծիսական տարուայ այն շրջանը՝ որ նախորդում է Սբ. Ծնունդին, կոչւում է *subara*, այսինքն՝ Աւետում: Այդ շրջանի առաջին կիրակին յիշատակում է Յովհաննէսի ծննդեան աւետումը Չաքարիային, երկրորդ կիրակին՝ Յիսուսին ծննդեան աւետումը Մարիամին, երրորդը՝ Մարիամի այցելութիւնը Եղիսաբէթին, չորրորդը՝ հրեշտակի կողմից Յովսեփին տրուած բացատրութիւնները Մարիամի կուսական յղութեան մասին, եւ հինգերորդը՝ Փրկչի ծննդաբանութիւնը:

Մարիամի մասին շարականներ եւ ճառեր գրած ասորի հեղինակներից յիշարժան են երկուսը. Սբ. Եփրեմը Տրդ դարում եւ Սէվէրոս Անտիոքացին Երդ դարում:

Աստուածամօր ասորական սրբավայրերից կարելի է յիշատակել Շարֆայի եկեղեցին, որն ուխտագնացութիւնների նպատակակէտն է դառնում յատկապէս Օգոստոսի 15ին:

4. **Մարոնիթ Ծէսը:** Մարոնիթ Ծէսը մեծաւ մասամբ նոյնանում է ասորի Ծէսի հետ, միայն մի քանի տարբերութիւններով՝ որ յառաջ են գալիս մարոնիթների վրայ արեւմտեան Ծէսի ունեցած ազդեցութիւնից:

Մարիամին է նուիրուած Մայիս ամիսը: Մարոնիթ Ծէսի իւրայատկութիւնը Մարիամի սրբապատկերով ժողովուրդն օրհնելն է, շարականների, խնկարկման եւ օրհնութեան ընկերակցութեամբ՝ որ քահանան մաղթում է ժողովուրդին, ասելով.

«Աստուածամայր Կոյս Մարիամի բարեխօսութեամբ, թող օրհնի ձեզ Ամենասուրբ Երրորդութիւնը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին»։ Հաւատացեալները պատասխանում են. «Ամէն, որովհետեւ բոլոր բարիքները գալիս են Սուրբ Կոյսից»։

Բազմաքանակ են Մարիամին նուիրուած ժողովրդական երգերը, որոնց բնորոշ յատկութիւնը եղանակների պարզութիւնն է։

Մարեմական գլխաւոր սրբավայրը գտնուում է Հարիսսայի բլրան վրայ, ուր կանգնեցուած է նաեւ Տիրամօր մի հսկայ արձան։

5. **Քաղաքական եւ Մալաբար Ծէ՞ւը**։ Չորեքշաբթի օրը յատուկ կերպով նուիրուած է Աստուածամօրը։ Ժամերգութիւնների աւարտին կայ քահանայական աղօթքների մի երկար շարք, որի մէջ յատուկ կարեւորութիւն ունի Մարիամին ուղղուած աղօթքը։

Մինչ նեստորականները իրենց ծէսը չեն զարգացրել 13րդ դարից այս կողմ, կաթողիկէ քաղաքացիները 19րդ դարում ներմուծել են Աւետման, Այցելութեան, Ծնունդի եւ Անարատ Յղութեան տօները։ Մալաբարները, 17րդ դարից սկսած, հետեւում են լատին տօնացոյցին։ Այս կաթողիկէների մօտ, Մարիամին են նուիրուած Մայիս եւ Օգոստոս ամիսները։ Մարիամի ծննդեան տօնին պատրաստուում են յատուկ ծոմապահութեամբ, Սեպտ. 1ից սկսած։

6. **Ղադի Ծէ՞ւը**։ Մարիամին է նուիրուած Դեկտեմբեր ամիսը, որպէս Սբ. Ծննդեան պատրաստութիւն։ Մի յատուկ գիրք, որ սովորաբար անուանում են Թէոտոկիա, պարունակում է Մարիամին նուիրուած շարականներ շաբաթուայ բոլոր օրերի համար, որոնք երգւում են Գիշերային եւ Երեկոյեան ժամերգութիւնների ընթացքում։ Այդ շարականների տների թիւը փոփոխական է. ութ կամ տասը, կիրակի օրը՝ քսաներկու։ Շարականները ներշնչուած են հիմնականում այն պատկերներից, որոնք գտնուում են Հին Կտակարանում եւ վերաբերում են Փրկչի Մօրը։

Մարեմական սրբավայրերից կարելի է յիշել Մաթարիէհինը, Կահիրէի մօտ, ուր ըստ աւանդութեան՝ Սբ. Ընտանիքը բնակութիւն է հաստատել Եգիպտոս փախած ժամանակ։ Ամենաշատ այցելուած սրբավայրը գտնուում է Դէիր Դրոնկայում, Ասսիոյի գաւառում. յատկապէս Օգոստոսի 15ին մայրերն իրենց զաւակներին բերում են այստեղ, որպէսզի մարեմական այդ սրբավայրում մկրտուեն։

7. **Եւրովպական Ծէ՞ւը**։ Եթովպացիները նոյնպէս, Դեկտեմբեր ամիսն երգում են Թէոտոկիաները։ Ունեն նաեւ մի ա՛յլ մարեմական ժամերգութիւն, շաբաթուայ եօթ օրերի վրայ բաժանուած։ Շարականներից մէկը, որ կոչւում է Ծաղիկի երգը, հաշւում է 156 տուն, իսկ մի ուրիշը, որ կոչւում է Կոյսի Սաղմոսարան, հաշւում է 108 տուն։

Մարիամի համար, որին անուանում են Ողորմութեան Ուխտ կամ Դաշինք, յօրինել են քառասուններկու տուն հաշւող մի շարական, որում երեւում է այն վիթխարի վստահութիւնը՝ որ հաւատացեալներն ունեն Մարիամի նկատմամբ. «Ողորմութեան Ուխտ, սա՛ է մեր Տիրուհուն՝ Սրբուհի կրկնակի Կոյս Մարիամ Աստուածածնի անունը։ Երբ արտասանուում է այս անունը, դողում են երկնքի հաստատութիւնը եւ երկրի ընդերքները մինչեւ դժոխքի հիմքերը։ Երկիւղով դողում են Հրեշտակների թեւերը՝ ինչպէս քամուց քշուած տերեւներ։ Երբ արտասանուում է այս անունը, մի կողմ թողնելով արարածների երկիւղը, մեր Տէրն ինքը եւ մեր Փրկիչը, Նրա Որդին, որ իր ձեռքերում ունի ամենակարողութիւնը, երբ իր առջեւ է կանչում մեղաւորներին՝ հռչակելու համար պատժի դատաստանը, լսելով՝ թէ ինչպէս է աղօթում Կոյսի անունը, մեղաւորների ճակատին գրուած Ուխտի գոյնով, գթութեան է թողնում դատարանի սրահը եւ չի հռչակում (պատժի) դատաստանը»։

ՄԱՐԻԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԾԷԱՈՒՄ

ա) **Եփեսոսի Ժողովի առաջ (1-5րդ դար)**: Եկեղեցու առաջին երեք դարերից որպես վկայութիւն են մնացել Աստուածամօր զանազան հռչակաւոր պատկերները, որ գտնուում են Հռոմի գեոնադամբաններում: Դրանցից հնագոյնը, Պրիշիլլայի գերեզմանոցում, շրջ դարի գործ է: Ապա, Պրիշիլլայի նոյն գերեզմանոցում, գտնուում է Յրդ դարում պատկերուած մի որմնանկար, ուր Մարիամը ներկայացւում է որպէս բնօրինակը եւ պաշտպանը կուսակրօն ճգնողական կեանքի, վանականութեան:

Այս շրջանի մարեմական վկայութիւններից մէկն է նաեւ «Ընդ հովանեաւ քո ապաւինիմք» աղօթքը, որ կատարուում է հռոմէական եւ ամբրոզիան Ծէսերում: Վերջերս, այս աղօթքը գտնուեց Յրդ դարի դպտի մի ձեռագրում, որով փաստուեց այդ աղօթքի արեւելեան ծագումը եւ այն հաղորդակցութիւնը՝ որ այդ շրջանում գոյութիւն ունէր Արեւելեան եւ Արեւմտեան Եկեղեցիների միջեւ:

Չորրորդ դարում, յատուկ կերպով յիշարժան է Սբ. Ամբրոսիոսը (մօտ 339-397): Ըստ Հարնակի, Եկեղեցու այս մեծ Հայրապետը բոլորից աւելի է արժանացել «մարեմական բարեպաշտութեան պաշտպան»ի պատուոյ տիտղոսին: Սուրբ Ամբրոսիոսը, յիւրաւի, ներկայացնում է մարեմական բարեպաշտութեան երկու ճիւղերը. մեծարումը եւ նմանողութիւնը: Մեծարումի մասին գրում է. «Ո՞վ կարող է չմեծարել այսքա՛ն կոյսերի մօրը»: Իսկ նմանողութեան մասին. «Մարիամը այնպիսին եղաւ, որ միմիայն Նրա կեանքն է կանոն բոլորի համար»: Եւ իրաւացիօրէն եզրակացնում է. «Այս իսկ պատճառով, Մարիամը թող լինի մեր կեանքի կանոնը»:

բ) **Եփեսոսի Ժողովի մինչեւ միջնադար (5-9րդ դար)**: Եփեսոսի ժողովը, Մարիամի աստուածային մայրութեան հիմնական ճշմարտութեան հռչակմամբ, հզօր ուժ տուեց մարեմական բարեպաշտութեան ծաւալմանը ո՛չ միայն Արեւելքում, այլ նաեւ Արեւմուտքում, ինչպէս յստակ երեւում է ի պատիւ Աստուածամօր կառուցուած եկեղեցիներից, սրբապատկերներից, ծիսական շարականներից եւ այլն:

Յրդ դարում, Արեւմուտքում գոյութիւն ունէր Աստուածամօր մի տօն, որ կատարուում էր Յունուարի 1ին եւ նուիրուած էր աստուածային մայրութեանը: Սուրբ Գրիգոր Թուրսացին (+ 594) վկայում է՝ թէ Գաղիայում տարուայ տասներորդ ամսուայ կէսին կատարուում էր Աստուածամօրը նուիրուած մի տօն, բայց որ չէր վերաբերում մարեմական խորհուրդներից որեւէ մէկին, այլ Մարիամին յիշատակում էր ընդհանուր կերպով: Եթէ հաշուի առնենք՝ որ յայնժամ տարին սկսւում էր Մարտով, տասներորդ ամիսը գալիս է Դեկտեմբերը: Այս տօնին նուիրուած, պահպանուել է Սբ. Կեսար Արլսացու (+ 543) ճառերից մէկը:

Պրդ դարի կէսին, մարեմական չորս մեծ տօներ (Մաքրագործումը, Աւետումը, Վերափոխումը, Մարիամի Ծնունդը), որ արդէն տօնակատարուում էին Արեւելքում, մուտք են գործում հռոմէական Ծէսից ներս, հաւանաբար՝ Արեւելքից Արեւմուտք գաղթած արեւելեան վանականների միջոցով: Հռոմի Սարգիս Առաջին Քահանայապետը (687-701) պատուիրում է մեծ հանդիսաւորութեամբ տօնել այս տօները եւ թափօր կազմակերպել Սբ. Ադրիանոսի եկեղեցուց մինչեւ Սբ. Մարիամ Մեծ տաճարը: Յաջորդ դարում, այս չորս տօները Հռոմից տարածուեցին ամբողջ Արեւմուտքով մէկ:

